ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 1379-Ա **«5» սեպտեմբերի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 38-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու համար վերապատրաստման և հավաստագրման քննությունների հարցաշարը հաստատելու մասին» N 38-Ա/Ք հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
5-ը սեպտեմբերի 2024թ.
N 1379-Ա հրամանի

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
30-ը հունվարի 2015թ.
N 38-Ա/Ք հրամանի

ՀԱՐՑԱՇԱՐ

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (Հավաստագիր) ստանալու համար վերապատրաստման և հավաստագրման քննությունների

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ

Հարց 1

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են՝

Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 6, մաս 1

Հարց 2

Ո՞ր օրենքն ունի հետադարձ ուժ:

Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 72

Հարց 3

Ո՞ր օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

Անձի իրավական վիճակը վատթարացնող:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 73, մաս 1

Հարց 4

Տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք ունի՝

Յուրաքանչյուր ոք՝ առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 42, մաս 1

Հարց 5

Նշվածներից ո՞ր դեպքում է հանցագործության համար մեղադրվողը համարվում անմեղ:

Քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 66

Հարց 6

Հայաստանի Հանրապետությունում գործում են՝

Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 163, մաս 1

Հարց 7

Մտավոր սեփականությունը պաշտպանվում է՝

Օրենքով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 60, մաս 7

Հարց 8

Նշվածներից ո՞ր մարմիններն են ՀՀ-ում իրականացնում արդարադատություն:

Միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 162, մաս 1

Հարց 9

Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը:

Օրենքով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 47, մաս 6

Հարց 10

Ո՞վ է ստորագրում Կառավարության որոշումները:

Վարչապետը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 153, մաս 2

Հարց 11

Նշվածներից ո՞ր դատարանն է օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

Սահմանադրական դատարանը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 168, կետ 12

Հարց 12

Ո՞վ է նշանակում և ազատում մարզպետներին՝

Կառավարությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 160, մաս 2

Հարց 13

Ո՞վ ունի կրթության իրավունք՝

Յուրաքանչյուր ոք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1

Հարց 14

Ո՞ր իրավական ակտով են սահմանվում պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը:

Օրենքով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1

Հարց 15

Ո՞ր կրթությունն է անվճար պետական ուսումնական հաստատություններում:

Միջնակարգ:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1

Հարց 16

Ո՞ր տարիքի երեխաներին է արգելվում ընդունել մշտական աշխատանքի՝

Մինչև 16 տարեկան:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 57, մաս 4

Հարց 17

Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման կարգը:

Օրենքով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 185, մաս 2

Հարց 18

Որո՞նք են ՀՀ վարչատարածքային միավորները:

Մարզերը և համայնքները:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 121

Հարց 19

Ովքե՞ր իրավունք չունեն ընտրելու, ընտրվելու և մասնակցելու հանրաքվեին՝

Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 48, մաս 4

Հարց 20

Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքն ու՞մ է պատկանում:

Պատգամավորներին, Ազգային ժողովի խմբակցություններին և Կառավարությանը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 109, մաս 1

Հարց 21

Ո՞ր պաշտոնատար անձանցից է կազմված ՀՀ կառավարությունը:

Վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 147 մաս 1

Հարց 22

Ո՞վ է տնօրինում համայնքի սեփականությունը:

Համայնքի ավագանին՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 184, մաս 3

Հարց 23

Ո՞վ է նշանակում հանրաքվեն:

ՀՀ Նախագահը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 206

Հարց 24

Նշվածներից ո՞ր բնագավառներն են գտնվում պետության հոգածության և պաշտպանության ներքո:

Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 15, մաս 2

Հարց 25

Հայաստանի Հանրապետության զինանշանն է՝

Կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 21, մաս 2

Հարց 26

Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերն են՝

ՀՀ դրոշը, ՀՀ զինանշանը, ՀՀ օրհներգը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 21

Հարց 27

Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 14, մաս 1

Հարց 28

Ու՞մ կողմից է ընտրվում ՀՀ Նախագահը, ի՞նչ ժամկետով:

Հանրապետության Նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ յոթ տարի ժամկետով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 124 , մաս 1 և հոդված 125, մաս 1

Հարց 29

Ու՞մ առաջարկությամբ և ո՞վ է Կառավարության կազմում կատարում փոփոխություններ:

Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, փոփոխություններ է կատարում Կառավարության կազմում:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 131

Հարց 30

Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են՝

Սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 10, մաս 1

Հարց 31

Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով և ո՞ր դեպքում՝

Անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 27, մաս 1 կետ 5

Հարց 32

Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարո՞ղ է սահմանափակվել:

Կարող է՝ միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 34, մաս 4

Հարց 33

Ո՞ր պատիժներն են արգելվում:

Մարմնական:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 26, մաս 2

Հարց 34

Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների՝

Դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 36, մաս 1

Հարց 35

Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել՝

Բարձրագույն կրթություն ունեցող, պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող յուրաքանչյուր ոք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 192, մաս 2

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հարց 36

Ո՞ր դեպքում է պայմանագիրը համարվում կնքված,

եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 448, մաս 1

Հարց 37

Ովքե՞ր են պատասխանատվություն կրում տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի համար:

Նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1067, մաս 1

Հարց 38

Ինչպիսի՞ պատասխանատվություն են կրում տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն իրենց պատճառած վնասի համար:

Ինքնուրույն պատասխանատվություն են կրում իրենց պատճառած վնասի համար՝ ընդհանուր հիմունքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1068, մաս 1

Հարց 39

Ովքե՞ր պետք է հատուցեն տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի պատճառած վնասի համար, եթե նա չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք:

Վնասը լրիվ կամ պակասող մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1068, մաս 2

Հարց 40

Ի՞նչ է պարտավորվում վարձատուն վարձակալության պայմանագրով:

Պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 606

Հարց 41

Ինչպե՞ս է կնքվում վարձակալության պայմանագիրը:

Գրավոր:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 610, մաս 1

Հարց 42

Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է՝

Նոտարական վավերացման:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդված 610, մաս 2

Հարց 43

Շենքի կամ շինության վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են՝

Պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 655

ՀՀ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»

Հարց 44

Ի՞նչ հարաբերություններ են կարգավորվում աշխատանքային օրենսգրքով:

Կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 1, մաս 1)

Հարց 45

Նշվածներից ո՞ր դեպքում աշխատանքը չի համարվում պարտադիր կամ հարկադիր:

Զինվորական կամ այլընտրանքային ծառայությունը:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 3.2, մաս 3, կետ 2)

Հարց 46

Ինչպե՞ս են ընդունվում գործատուի ներքին և անհատական իրավական ակտերը:

Հրամանների կամ կարգադրությունների, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այլ իրավական ակտերի տեսքով:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 5, մաս 1)

Հարց 47

Ո՞ր դեպքերում են ընդունվում ներքին իրավական ակտերը:

Կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքի (հերթափոխային) և հանգստի ժամանակացույցերը (գրաֆիկները) հաստատելու, աշխատողներին արտաժամյա աշխատանքի և հերթապահության ներգրավելու, ինչպես նաև Աշխատանքային օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 5, մաս 2)

Հարց 48

Ի՞նչ նպատակով է գործատուն ընդունում անհատական իրավական ակտեր:

Անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորելու:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդվված 5, մաս 3)

Հարց 49

Ե՞րբ են ուժի մեջ մտնում գործատուի ընդունած ներքին և անհատական իրավական ակտերը:

Այդ ակտի մասին համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու պահից, եթե այդ իրավական ակտերով այլ ժամկետ նախատեսված չէ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 5, մաս 4, առաջին նախադասություն)

Հարց 50

Ինչպիսի՞ հարաբերությունների դեպքում է աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ, պաշտոնում կամ համապատասխան կրթական ծրագրի որակավորման նկարագրով սահմանված աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

Աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված աշխատանքային հարաբերությունների:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 13)

Հարց 51

Նշվածներից ո՞ր դեպքում է քաղաքացին համարվում աշխատող:

Աշխատանքային օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման, պաշտոնի կամ համապատասխան կրթական ծրագրի որակավորման նկարագրի:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 17, մաս 1)

Հարց 52

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի էլ ովքե՞ր են համարվում աշխատող:

Օրենսգրքով սահմանված ժամանակավոր աշխատանք կատարող անձինք, ինչպես նաև մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն անցնող և աշխատանքային պայմանագրով սահմանված որոշակի աշխատանք կատարող սովորողները:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 17, մաս 2)

Հարց 53

Մինչեւ տասնութ տարեկան յուրաքանչյուր անձ իր տարիքային հնարավորություններին, զարգացման առանձնահատկություններին եւ ունակություններին համապատասխան ո՞ր դեպքում ունի աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք:

Աշխատանքային օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով չարգելված դեպքերում:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 17.1, մաս 1)

Հարց 54

Ի՞նչ պայմանագիր է կնքվում մինչև տասնվեց տարեկան անձնաց հետ:

Ժամանակավոր աշխատանքային պայմանագիր:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 17.1, մաս 3, նախադաս.1)

Հարց 55

Ի՞նչ նախապայմաններ են սահմանված մինչև տասնութ տարեկան անձանց աշխատանքներում ընդգրելու համար:

Կարող են ընդգրկվել միայն այնպիսի աշխատանքներում, որոնք չեն վտանգում նրանց առողջությունը (այդ թվում՝ ֆիզիկական և մտավոր զարգացումը), բարոյականությունը, չեն սպառնում նրանց անվտանգությանը և չեն խոչընդոտում նրանց պարտադիր կրթությունը:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 17.1, մաս 5, նախադաս. 1)

Հարց 56

Ինչպե՞ս է կազմակերպվում մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող և որոշակի աշխատանք կատարող մինչև տասնութ տարեկան անձանց աշխատանքը՝

Կազմակերպվում է օրենսգրքի առանձին դրույթներով նախատեսված առանձնահատկությունները հաշվի առնելով:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 17.1, մաս 5, նախադաս.2)

Հարց 57

Ո՞ր դեպքերում է կարող է բացառություն կազմել մինչև տասնութ տարեկան անձանց աշխատանքը հանգստյան, ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ընդգրկելու համար:

Մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու, ինչպես նաև մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում աշխատանքային պայմանագրով սահմանված որոշակի աշխատանք կատարելու դեպքերի:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 17.1, մաս 6)

Հարց 58

Աշխատանքային հարաբերության ո՞ր մասնակիցն է գործատուն:

Որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 18, մաս 1,)

Հարց 59

Ինչպե՞ս է կոչվում այն տեղը, որտեղ աշխատողը կատարում է աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով սահմանված աշխատանքային գործառույթները, կամ որտեղ աշխատողը պետք է գտնվի կամ պետք է ներկայանա՝ իր աշխատանքով պայմանավորված, և որն ուղղակի (անմիջականորեն) կամ անուղղակի գտնվում է գործատուի կառավարման (ղեկավարման) կամ հսկողության ներքո.

Աշխատանքի վայր (աշխատավայրը):

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 18.1, մաս 1)

Հարց 60

Ինչպե՞ս է կոչվում այն ժամանակահատվածը, որի ընթացքում քաղաքացին եղել է Աշխատանքային օրենսգրքով կարգավորվող աշխատանքային հարաբերությունների մեջ, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք, նորմատիվ իրավական ակտերին կամ կոլեկտիվ պայմանագրերին համապատասխան, կարող են հաշվարկվել աշխատանքային ստաժում, որով աշխատանքային օրենսդրությունը, այլ նորմատիվ իրավական ակտերը և կոլեկտիվ պայմանագրերը պայմանավորում են որոշակի աշխատանքային իրավունքներ կամ աշխատանքային լրացուցիչ երաշխիքներ ու արտոնություններ:

Աշխատանքային ստաժ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 20, մաս 1, նախադասություն 1)

Հարց 61

Ո՞ր պահանջների նկատմամբ չի տարածվում հայցային վաղեմության ժամկետը:

Աշխատողի պատվի և արժանապատվության պաշտպանության, աշխատավարձի, ինչպես նաև աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջների:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 30, մաս 3)

Հարց 62

Ինչո՞վ է սահմանվում աշխատողի և գործատուի միջև համաձայնությունը, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, պաշտոնում, որակավորմամբ կամ որակավորում չպահանջող կամ մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

Աշխատանքային պայմանագրով:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 83, մաս 1)

Հարց 63

Նշվածներից ո՞րը չի նշվում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում, աշխատանքային պայմանագրում:

Պարգևավճար սահմանելու պայմանները և չափը:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 84, մաս 1)

Հարց 64

Ինչպե՞ս է կիրառվում կնքված աշխատանքային պայմանագրի պայմանները, եթե աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո ընդունվել է օրենք կամ այլ նորմատիվ իրավական ակտ, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ, քան պայմանագիրը կնքելիս գործող կանոններն են սահմանում:

Կնքված պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված է, որ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 84.1, մաս 2, նախադաս. 1)

Հարց 65

Ի՞նչ անել աշխատանքային պայմանագրի հետ՝ օրենսդրությամբ ավելի բարենպաստ պայմաններ սահմանվելու դեպքում:

Աշխատանքային պայմանագիրը պետք է համապատասխանեցվի օրենսդրության պահանջներին:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 84.1, մաս 2, նախադաս. 2)

Հարց 66

Ինչպե՞ս կարող է կնքվել աշխատանքային պայմանագիրը:

Փոստային կամ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով այն կողմերի միջև փոխանակելով, որը հնարավորություն է տալիս հաստատելու պայմանագրի իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է աշխատանքային պայմանագրի կողմից:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 85, մաս 1.1, նախադաս. 1)

Հարց 67

Աշխատող փնտրող գործատուն ինչպե՞ս կարող է համալրել թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը:

Իր կազմակերպած մրցույթով, ուսումնական հաստատությունների սովորողների (շրջանավարտների) ռեսուրսներից կամ օգտվել համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների ծառայություններից:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 86, նախադաս. 2)

Հարց 68

Նշվածներից ո՞ր պարտադիր փաստաթուղթն է, որը գործատուն պարտավոր է պահանջել աշխատանքային պայմանագիր կնքելու համար:

Կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայական, եթե օրենսդրությանը համապատասխան՝ աշխատանքը կապված է որոշակի կրթության կամ մասնագիտական պատրաստվածության հետ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 89, մաս 1, կետ 3)

Հարց 69

Նշվածներից ո՞ր պարտադիր փաստաթուղթն է, որը գործատուն պարտավոր է պահանջել աշխատանքային պայմանագիր կնքելու համար:

Տեղեկանք առողջական վիճակի մասին, եթե աշխատանքային պայմանագիրը կնքվում է այնպիսի աշխատանքների համար, որոնք պահանջում են նախնական և պարբերական բժշկական զննություն, ինչպես նաև մինչև տասնութ տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելու ժամանակ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 89, մաս 1, կետ 4, նախադաս.1)

Հարց 70

Ի՞նչ տվյալներ կամ փաստաթղթեր կարող է աշխատողը իր նախաձեռնությամբ ներկայացնել գործատուին:

Բնութագիր, երաշխավորագիր և նախկին աշխատավայրերում իրեն բնութագրող այլ փաստաթղթեր, ինչպես նաև մասնագիտական պատրաստվածության, որակավորման և դրանց կիրառման վերաբերյալ տվյալներ կամ փաստաթղթեր:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 89, մաս 3)

Հարց 71

Աշխատանքային պայմանագիր կնքելիս ու՞մ կողմից և ի՞նչ նպատակով կարող է սահմանվել փորձաշրջան:

Գործատուի ցանկությամբ՝ նախատեսված աշխատանքին (պաշտոնին) աշխատողի համապատասխանությունը ստուգելու նպատակով, կամ աշխատանքի ընդունվողի ցանկությամբ՝ առաջարկվող աշխատանքին (պաշտոնին) իր համապատասխանությունը որոշելու համար:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 91, մաս 1, նախադաս. 2)

Հարց 72

Ո՞ր անձանց աշխատանքի ընդունվելու դեպքում փորձաշրջան չի կարող նախատեսվել:

Եթե աշխատանքի են ընդունվում տասնութ տարին չլրացած անձինք կամ մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված որոշակի աշխատանք կատարող սովորողները:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 91, մաս 3, կետ 1.)

Հարց 73

Ի՞նչ ժամկետով կարող է սահմանվել փորձաշրջան:

Մինչև տասներկու ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 92, մաս 2)

Հարց 73

Նշվածներից ո՞ր տեսակով է կնքվում աշխատանքային պայմանագիրը:

Անորոշ ժամկետով, բացառությամբ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 94, մաս 2)

Հարց 74

Ո՞ր դեպքում կարող է կնքվել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

Եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը կամ կատարման պայմանները, եթե սույն օրենսգրքով կամ օրենքներով այլ բան նախատեսված չէ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 95, մաս 1)

Հարց 75

Ինչպե՞ս կարող է կնքվել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը:

Որոշակի ժամանակահատվածով կամ օրացուցային ժամկետի սահմանումով կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտման սահմանումով:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 95, մաս 2)

Հարց 76

Ի՞նչ է կատարվում, եթե նույն գործատուի մոտ նույն աշխատողի հետ նույն աշխատանքի համար որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է, կամ նույն գործատուի մոտ նույն աշխատանքի համար նույն աշխատողի հետ երկրորդ անգամ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որոնց ընդհատումը չի գերազանցում մեկ ամիսը:

Աշխատանքային պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 95, մաս 2.1)

Հարց 77

Նշվածներից ո՞ր դեպքում է կնքվում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող և որոշակի աշխատանք կատարող սովորողների հետ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 95, մաս 3, կետ 4.1)

Հարց 78

Նշվածներից ո՞ր դեպքում է կնքվում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

Ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 95, մաս 3, կետ 5)

Հարց 79

Նշվածներից ո՞ր դեպքում է կնքվում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

Օտարերկրացիների հետ՝ կացության իրավունքի վավերականության ժամկետով, եթե Հայաստանի Հանրապետությունում աշխատելու համար օտարերկրացուց պահանջվում է ունենալ կացության կարգավիճակ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 95, մաս 3, կետ 6)

Հարց 80

Ի՞նչ է համատեղությամբ աշխատանքը:

Հիմնական աշխատանքից ազատ ժամանակ (բացառությամբ Աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքի), միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանք:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 99, մաս 1)

Հարց 81

Ովքե՞ր և ո՞ր դեպքերում կարող են համատեղությամբ աշխատանքը կատարել նաև իրենց հիմնական աշխատանքի աշխատանքային ժամերի ընթացքում:

Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք՝ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքը կատարելիս, գործատուի ներքին կարգապահական կանոններով կամ կոլեկտիվ պայմանագրով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 99, մաս 2)

Հարց 82

Համատեղությամբ աշխատանքի դեպքում ո՞ր աշխատանքն է համարվում հիմնական:

Այն աշխատանքը, որը կատարվում է առավել վաղ կնքված աշխատանքային պայմանագրի կամ առավել վաղ ընդունված աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքի:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 99, մաս 4)

Հարց 83

Երբ է տրամադրվում միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ համատեղությամբ աշխատողի ամենամյա արձակուրդը:

Հիմնական աշխատանքի համար տրամադրվող ամենամյա արձակուրդի հետ միաժամանակ, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 99, մաս 6, հոդված 164, մաս 6)

Հարց 84

Ո՞ր պայմանագիրն է կնքվում մինչև երկու ամիս ժամկետով:

Ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 101, մաս 1)

Հարց 85

Ո՞ր դեպքերում կարող է բացառություն կազմել Ժամանակավոր աշխատանքային պայմանագիր կնքած մինչև տասնութ տարեկան անձանց աշխատանքը հանգստյան օրերին, ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ընդգրկելու համար:

Կարող են մասնակցել միայն մարզական և մշակութային միջոցառումներին կամ կատարել մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում աշխատանքային պայմանագրով սահմանված որոշակի աշխատանք:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 101, մաս2)

Հարց 86

Ու՞մ հետ է մասնագիտական կրթության և ուսուցման մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում կնքվում աշխատանքային պայմանագիր:

Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող և որոշակի աշխատանք կատարող սովորողի (նրա օրինական ներկայացուցչի) հետ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 101.1, մաս 1)

Հարց 87

Ի՞նչ ժամանակահատվածի համար է կնքվում աշխատանքային պայմանագիրը մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող և որոշակի աշխատանք կատարող սովորողի (նրա օրինական ներկայացուցչի) հետ:

Այն ժամանակահատվածի համար, որը սահմանվել է գործնական աշխատանքային ուսուցման ծրագրի իրագործման համար:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 101.1, մաս 2)

Հարց 88

Ինչպե՞ս է վարձատրվում աշխատանքային պայմանագրով մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային

ուսուցում անցնող և որոշակի աշխատանք կատարող սովորողի (նրա օրինական ներկայացուցչի) աշխատանքը.

Վարձատրվում է փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան՝ համաձայն գործատուի սահմանած ժամանակացույցի (գրաֆիկի):

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 101.1, մաս 3)

Հարց 89

Ինչպե՞ս է կոչվում այն աշխատանքը, որն իրականացվում է առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի:

Անօրինական աշխատանք:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 102, մաս 1)

Հարց 90

Նշվածներից որո՞նք են աշխատանքի էական պայմանները:

Աշխատանքի վայրը, աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը, արտոնությունները, աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմը, տարակարգերը և պաշտոնների անվանումները, աշխատանքային գործառույթները, աշխատանքային պայմանագրի տեսակը:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 105, մաս 2)

Հարց 91

Նշված ո՞ր դեպքում գործատուն կարող է աշխատանքային օրենսգրքով սահմանված ժամկետներում չծանուցել աշխատողին աշխատանքի էական պայմանների փոփոխման մասին:

Հիմնական աշխատավարձի չափի և (կամ) հավելումների, հավելավճարների, լրավճարների, բարձրացման դեպքում, երբ մյուս պայմանները պահպանվում են:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 105, մաս 2, կետ 1)

Հարց 92

Ո՞ր դեպքում է աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցումն ուժը կորցրած ճանաչվում:

Եթե ծանուցման ժամկետը լրանալուց հետո անցել է հինգ օրից ավելի ժամանակ, և գործատուն չի լուծել պայմանագիրը:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 115, մաս 5, նախադաս.1)

Հարց 93

Ո՞ր դեպքում գործատուն իրավունք ունի լուծել աշխատանքային պայմանագիրը՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու հիմքով:

Եթե մասնագիտական ունակությունների անբավարարության կամ առողջական վիճակի պատճառով աշխատողը չի կարողանում կատարել իր աշխատանքային պարտականությունները:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 120, մաս 1)

Հարց 94

Ո՞վ է գնահատում աշխատողի մասնագիտական ունակությունների համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին կամ կատարվող աշխատանքին:

Գործատուն:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 120, մաս 3, նախադաս.1)

Հարց 95

Նշվածներից ո՞ր դեպքում գործատուն կարող է միակողմանի լուծել վստահությունը կորցրած աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը:

Եթե ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 122, մաս 1, կետ 2)

Հարց 96

Ո՞ր դեպքում գործատուն աշխատողի հետ վերջնահաշվարկ չի կատարում:

Եթե աշխատողը նույն գործատուի կամ օրենքով սահմանված կարգով իրավահաջորդ ճանաչված գործատուի մոտ առանց աշխատանքային պայմանագրի լուծման փոխադրվում (տեղափոխվում) է այլ աշխատանք:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 130, մաս 1.1)

Հարց 97

Նշված ո՞ր ժամանակահատվածը չի ներառվում աշխատաժամանակում, սակայն աշխատանքային ստաժում հաշվարկվում է:

Գործատուի կամ նրա ներկայացուցչի համաձայնությամբ աշխատանքի չներկայանալու ժամանակահատվածը՝ մեկ աշխատանքային տարվա ընթացքում ոչ ավելի, քան 30 օր:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 138, մաս 2, կետ 1)

Հարց 98

Որքա՞ն է աշխատաժամանակի շաբաթական նորմալ տևողությունը:

Չի կարող անցնել շաբաթական 40 ժամից:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 139, մաս 1)

Հարց 99

Որքա՞ն է ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը:

Չի կարող անցնել ութ աշխատանքային ժամից, բացառությամբ սույն օրենսգրքով, օրենքով, և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 139, մաս 2)

Հարց 100

Որքա՞ն է աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը:

Չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 139, մաս 3)

Հարց 101

Աշխատաժամանակի կրճատ տևողության ի՞նչ ժամանակ է սահմանվում մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերով, աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում, աշխատանքային օրենսգրքով նախատեսված աշխատաններում ներգրավված մինչև 18 տարեկան անձանց համար:

Օրական մինչև չորս ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան քսան ժամ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 140, մաս 1, կետ 3.1)

Հարց 102

Որքա՞ն է սահմանվում աշխատաժամանակի կրճատ տևողություն տասնվեցից մինչև տասնութ տարեկանների համար:

Շաբաթական մինչև 36 ժամ՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 140, մաս 1, կետ 5)

Հարց 103

Ո՞ր բացառիկ դեպքերում մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված որոշակի աշխատանք կատարող տասնվեցից մինչև տասնութ տարեկան սովորողները կարող են ներգրավվել աշխատանքի գիշերային ժամանակ:

Օրեսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ, եթե աշխատանքը պայմանավորված է կրթական ծրագրի որակավորման առանձնահատկություններով, անխուսափելիորեն անհրաժեշտ է ուսումնառության վերջնարդյունքներն ապահովելու համար և արգելված չէ բժշկական եզրակացությամբ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 148, մաս 3.1, նախադաս.1)

Հարց 104

Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված որոշակի աշխատանք կատարող տասնվեցից մինչև տասնութ տարեկան սովորողների համար գիշերային ժամանակ աշխատանքի ի՞նչ սահմանափակում և բացառություններ են սահմանված:

Չի թույլատրվում ժամը 24-ից մինչև 4-ն ընկած ժամանակահատվածում, բացառությամբ զինված ուժերում, ոստիկանությունում, առողջապահական կամ բժշկական կազմակերպություններում աշխատանքի, եթե աշխատանքն անխուսափելիորեն անհրաժեշտ է կրթական ծրագրի որակավորման վերջնարդյունքների ապահովման համար:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 148, մաս 3.2)

Հարց 105

Ո՞ր դեպքում մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերով ուսումնառող տասնվեցից մինչև տասնութ տարեկան անձինք չեն կարող ներգրավվել աշխատանքի:

Մասնագիտական ուսումնական հաստատությունում դասերին անմիջապես նախորդող օրը՝ ժամը 20:00-ից հետո, եթե դասերն սկսվում են ժամը 9:00-ից շուտ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 148, մաս 3.4)

Հարց 106

Որքա՞ն է ամենամյա նվազագույն արձակուրդի տևողություն.

Հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24 աշխատանքային օր:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 159, մաս 1)

Հարց 107

Ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին և պրոֆեսորադասախոսական կազմին ե՞րբ է տրամադրվում ամենամյա արձակուրդը:

Սովորողների և ուսանողների ամառային արձակուրդի ժամանակ, այդ թվում՝ աշխատանքային առաջին տարում, անկախ այն հանգամանքից, թե երբ են այդ աշխատողներն սկսել իրենց աշխատանքը:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 164, մաս 6)

Հարց 108

Ե՞րբ է վճարվում ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը:

Աշխատանքային պայմանագիրը լուծելիս:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 170, մաս 2, նախադաս.1)

Հարց 109

Հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող աշխատողներին քանի՞ օր է տրամադրվում ուսումնական արձակուրդ պրակտիկաների համար և ինչպե՞ս:

Ուսումնական պլանով նախատեսված աշխատանքային օրերի քանակով՝ ուսումնական հաստատության միջնորդությամբ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 174, մաս 2, կետ 6)

Հարց 110

Ի՞նչ ժամկետով և ինչպե՞ս կարող է օտարերկրյա ուսումնական հաստատություններում իր մասնագիտական որակավորումը բարձրացնելու կամ անմիջականորեն աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված նոր գիտելիքներ ձեռք բերելու կամ դրանք զարգացնելու համար աշխատողին տրվել ուսումնական արձակուրդ:

Ուսման ողջ ժամանակահատվածում, բայց ոչ ավելի քան երկու տարի՝ գործատուի համաձայնությամբ:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 174, մաս 4)

Հարց 111

Առավելագույնը քանի օր կարող է աշխատողի պահանջով տրամադրել չվճարվող արձակուրդ համատեղությամբ աշխատողին՝ հիմնական աշխատավայրում գործուղման մեջ գտնվելու դեպքում կամ հիմնական աշխատավայրի աշխատողին՝ համատեղությամբ աշխատավայրում գործուղման մեջ գտնվելու դեպքում:

Ոչ ավելի, քան 30 օր աշխատանքային տարվա ընթացքում:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 176, մաս 1, կետ 6)

Հարց 112

Ինչպե՞ս է գործատուն կազմակերպում աշխատողների կարողությունների կատարելագործմանը, արդիականացմանը և նոր հմտությունների ձեռբերմանը միտված լրացուցիչ կրթական ծրագրեր:

Աշխատողի համաձայնությամբ և գնահատված կարիքի հիման վրա՝ իր մոտ կամ այլ վայրում (այդ թվում՝ օտարերկրյա պետությունում):

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 201.2, մաս 1)

Հարց 113

Կարո՞ղ է արդյոք աշխատողների կարողությունների կատարելագործմանը, արդիականացմանը և նոր հմտությունների ձեռբերմանը միտված գործատուի կազմակերպած լրացուցիչ կրթական ծրագրերին.4 մասնակցությունը աշխատողի համար համարվել գործուղում.

Ոչ, աշխատանքային օրենսգրքի իմաստով՝ գործուղում չի համարվում:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 201.2, մաս 4)

Հարց 114

Կարո՞ղ է գործատուն կագապահական տույժը կիրառել առանց աշխատողի գրավոր բացատրության:

Կարող է, եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացրել գրավոր բացատրություն:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 226, մաս 1, նախադաս. 2)

Հարց 115

Ի՞նչ միջոցների հաշվին է կատարվում մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված որոշակի աշխատանք կատարող սովորողների բժշկական զննությունը, այդ թվում՝ պարբերական բժշկական զննությունը:

Ուսումնական հաստատության միջոցների հաշվին, եթե այլ բան սահմանված չէ գործատուի հետ կնքված պայմանագրով:

(Աշխատանքային օրենսգիրք, հոդված 249, մաս 1, պարբ. 2)

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 116

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ի՞նչ է հաշվապահական հաշվառումը:

Կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, զուտ ակտիվների (սեփական կապիտալի) վիճակի ու շարժի, ինչպես նաև հասույթների և ծախսերի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ՝ գործառնությունների, այլ

դեպքերի և իրադարձությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:

(«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 5, մաս 1)

Հարց 117

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ո՞րն է կազմակերպության ղեկավարի պարտավորություններից:

Լիազոր մարմնի հաստատած հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելի հիման վրա սահմանել կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և լիազոր մարմնի սահմանած կարգով և ժամկետներում այն համաձայնեցնել համապատասխան պետական մարմնի (եթե այդպիսին կա) և լիազոր մարմնի հետ:

(«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 8, մաս 3, կետ 1)

Հարց 118

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ինչի՞ համար է պատասխանատու գլխավոր հաշվապահը:

Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին պատրաստելու և ներկայացնելու համար:

(«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 9, մաս 2)

Հարց 119

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ինչպե՞ս են կատարվում հաշվապահական հաշվառման գրանցումները:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը:

(«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 11, մաս 1

Հարց 120

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը ե՞րբ են կազմվում:

Գործառնության կատարման (այլ դեպքի կամ իրադարձության տեղի ունենալու) պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության (այլ դեպքի կամ իրադարձության) ավարտից անմիջապես հետո:

(«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 11, մաս 4

Հարց 121

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ե՞րբ և ինչո՞ւ է կազմակերպությունը պարտադիր անցկացնում ակտիվների և պարտավորությունների գույքագրում:

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելուց առաջ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև կազմակերպության վերակազմակերպման և (կամ) լուծարման դեպքերում կազմակերպությունը պարտադիր անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում:

(«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 14, մաս 1)

Հարց 122

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ո՞րն է համարվում հաշվետու ժամանակահատված:

Հաշվետու տարին և միջանկյալ հաշվետու ժամանակահատվածը:

(«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 19, մաս 1)

Հարց 123

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ո՞րն է համարվում հաշվետու տարի:

Տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

(«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 19, մաս 2: նախադաս.1)

Հարց 124

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ո՞րն է համարվում Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օր:

Դրանց՝ ըստ պատկանելության հանձնելու օրը:

(«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 20, մաս 3: նախադաս.1)

Հարց 125

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ո՞րն է համարվում հաշվետվությունները փոստի միջոցով ներկայացման օր:

Փոստային բաժանմունքի ընդունման օրվա օրացուցային կնիքի արտատիպը, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում՝ հաշվետվության ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան ծանուցման հիման վրա հաշվետվության ներկայացման օրը:

(«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 20, մաս 3, նախադաս.2)

Հարց 126

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ո՞վ է պատասխանատվություն կրում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու համար:

Կազմակերպության ղեկավարը:

(«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 16, մաս 3)

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀՀ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հարց 127

Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք հոդված 33, կետ 2

Հարց 128

Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Իրավախախտում կատարելը անչափահասի կողմից:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 33, կետ 4

Հարց 129

Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի. իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 34, կետ 2

Հարց 130

Ո՞ր ժամկետում և դեպքում է անձը համարվում վարչական տույժի չենթարկված:

Եթե վարչական տույժի ենթարկված անձը տույժի կատարումն ավարտելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր վարչական իրավախախտում չի կատարել:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 38

Հարց 131

18 տարին լրացած անձի կողմից երեխային ոչ սթափ վիճակի հասցնելը, որը դրսևորվել է վերջինիս կողմից ոգելից խմիչքներ օգտագործելով կամ ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական նպատակներով օգտագործելով, ինչպես նաև երեխային թափառաշրջիկության կամ մուրացկանության դրդելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 177, 1-ին մաս

«ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարց 132

Տեսչական մարմինը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարում է՝

Օրենքով:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 2.

Հարց 133

Նշվածներից ո՞ր մարմնին է հաշվետու տեսչական մարմնի ղեկավարը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետին և Խորհրդին:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 2

Հարց 134

Տեսչական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատում է՝

Հայաստանի Հանրապետության վարչապետը:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 1

Հարց 135

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմինը՝

Վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ կրթության բնագավառում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշում, կետ 1

Հարց 136

Կրթության տեսչական մարմնի նպատակն է՝

Օրենքով սահմանված դեպքերում և կարգով նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության

ոլորտներում օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացումը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշում, կետ 8

Հարց 137

Տեսչական մարմնի խնդիրներն են՝

Նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև նշված ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշում, կետ 9

Հարց 138

Նշվածներից ո՞րն է տնտեսավարող սուբյեկտների կողմից նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների, կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների պահպանման նկատմամբ օրենքով սահմանված կարգով **վերահսկողություն իրականացնելու**, ներառյալ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով ստուգումների իրականացնելու տսաչական մարմնի **լիազորությունների ուղղություններից**:

Կրթության բովանդակությանը համապատասխան կրթական գործընթացի կազմակերպում, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարում, տարեկան ուսումնական ժամանակացույցների, դասացուցակների համապատասխանություն:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշում, կետ 10, 1-ին կետ, ա) ենթակետ

Հարց 139

Նշվածներից ո՞րն է տնտեսավարող սուբյեկտների կողմից նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների, կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների պահպանման նկատմամբ օրենքով սահմանված կարգով **վերահսկողություն իրականացնելու**, ներառյալ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով ստուգումների իրականացնելու տեսչական մարմնի **լիազորությունների ուղղություններից**:

Սովորողների և շրջանավարտների (անկախ կրթության ձևից) գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման քննակարգերի, աշխատակարգերի, պահպանում:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշում,կետ 10, 1-ին կետ, բ) ենթակետ

Հարց 140

Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ կրթության տեսչական մարմնի լիազորություններից:

Բացատրական աշխատանքների իրականացումը, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացումը, իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովումը և կանխարգելիչ գործունեությունը:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշում,կետ 10, 3-րդ կետ,

Հարց 141

Նշվածներից ո՞րն է կրթության տեսչական մարմնի լիազորություններից:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրերի ներկայացումը լիցենզավորող մարմիններ:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշում,կետ 10, 4-րդ կետ,

Հարց 142

Նշվածներից ո՞րն է կրթության տեսչական մարմնի լիազորություններից:

Վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումների հետևանքների վերացման աշխատանքներում տնտեսավարող սուբյեկտներին մեթոդական օգնության կազմակերպումը:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշում,կետ 10, 8-րդ կետ,

Հարց 143

Նշվածներից ո՞րն է կրթության տեսչական մարմնի լիազորություններից:

Ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա հաշվետվությունների, ակտերի, տեղեկանքների, արձանագրությունների, զեկուցագրերի, զեկույցների, վերլուծությունների, ամփոփագրերի և այլ փաստաթղթերի կազմումը:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշում,կետ 10, 14-րդ կետ,

Հարց 144

Նշվածներից ո՞րն է կրթության տեսչական մարմնի լիազորություններից.

Վերահսկողական գործառույթներին, ըստ անհրաժեշտության, անկախ փորձագետների, մասնագետների, կրթության հարցերով զբաղվող հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավումը:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշում,կետ 10, 16-րդ կետ,

«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 145

Ինչպե՞ս է սահմանվում «երեխա» հասկացությունը «Երեխայի իրավունքների մասին» օրենքով:

18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 1.1-րդ, կետ 1

Հարց 146

Համաձայն «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, ինչու՞ են պետական համապատասխան մարմինները հիմում հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն:

Ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 11-րդ, 2-րդ նախադասություն

Հարց 147

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի՝

հաղորդակցվելու իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, պարբ. 1

Հարց 148

Որտե՞ղ է հիմնականում իրականացվում երեխայի խնամքը և դաստիարակությունը:

Ընտանիքում:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, պարբ. 1

Հարց 149

Ո՞վ է երեխայի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կրում:

Ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 14, պարբ. 2

Հարց 149

Մինչև ո՞ր տարիքն է արգելվում երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին:

15 տարին:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 29, պարբ. 2

Հարց 150

Քրեական վարույթում երեխայի իրավունքները և դրանց իրականացման կարգը սահմանվում են՝

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք,հոդված 31, մաս.2.

«ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 151

Ինչպե՞ս է սահմանվում «անհատական իրավական ակտ» հասկացությունը:

Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 5

Հարց 152

Ինչպե՞ս է սահմանվում «ներքին **(լոկալ)** իրավական ակտ» հասկացությունը:

Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային, քաղաքացիաիրավական կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1 , կետ 6

Հարց 153

Ո՞ր լեզվով են շարադրվում նորմատիվ իրավական ակտերը:

Պետական լեզվով՝ հայերենով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 1

Հարց 154

Նորմատիվ իրավական ակտերով սահմանվող ձևաթղթերը՝

Կարող են շարադրվել օտար լեզվով կամ հայերենով՝ օտար լեզվի զուգորդմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 3

Հարց 155

Ինչպե՞ս են հաշվարկվում նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետները:

Տարիներով, ամիսներով, օրերով և ժամերով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 1

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 156

Նշվածներից ո՞րն է «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններով համարվում պատվիրատուներից:

Պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 1, ենթակետ գ.

Հարց 157

Նշվածներից ո՞րն է «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններով համարվում գնում:

Պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1 կետ 3

Հարց 158

Նշվածներից ո՞րն է «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններով համարվում «հրավեր»:

Պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 7

Հարց 159

Նշվածներից ո՞րն է «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններով համարվում «հայտ»:

Հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 8

Հարց 160

Նշվածներից ո՞րն է «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններով համարվում **«**պայմանագրի ապահովում**»:**

«Գնումների մասին» օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 10

Հարց 161

Նշվածներից ո՞րն է «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններով համարվում **«**գնման առարկա**»:**

Գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 16

Հարց 162

Նշվածներից ո՞րն է «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններով համարվում **«**գնման առարկայի բնութագիր**»:**

Գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 17

Հարց 163

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նշվածներից ո՞ր մարմինն է համարվում լիազորված մարմին:

Պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող ՀՀ գործադիր իշխանության պետական մարմինը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք հոդված 2 , մաս 1 , կետ 13

Հարց 164

Ո՞րքան է գնումների բազային միավորը:

Մեկ միլիոն ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, կետ 21

Հարց 165

Նշված գործարքներից ո՞ր տեսակի վրա չի տարածվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի գործողությունը:

Աշխատանքային պայմանագրերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենք հոդված 3, մաս 4, կետ 1

Հարց 166

«Գնումների մասին» ՀՀ օրենքով նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 3, կետ 1

Հարց 167

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ ովքե՞ր իրավունք չունեն մասնակցելու գնումների ընթացակարգերին:

Որոնց վերաբերյալ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության, գերիշխող դիրքի չարաշահման կամ անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվություն սահմանող վարչական ակտը հայտը ներկայացվելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում դարձել է անբողոքարկելի, իսկ բողոքարկված լինելու դեպքում թողնվել է անփոփոխ:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 1, կետ 4

Հարց 168

Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

Մասնագիտական փորձառությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 3, կետ 2

Հարց 169

Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

Տեխնիկական միջոցները:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 3, կետ 3

Հարց 170

Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

Ֆինանսական միջոցները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 6, մաս 3, կետ 4

Հարց 171

Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

Աշխատանքային ռեսուրսները:

«Գնումների մասին» ՀՀ օրենք հոդված 6, մաս 3, կետ 5

Հարց 172

Ի՞նչ փաստաթղթով է ձևավորվում գնահատող հանձնաժողովը:

Պատվիրատուի ղեկավարի հրամանով:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 1

Հարց 173

Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝

Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 1, կետ 2

Հարց 174

Պատվիրատուները ո՞ր մարմին են ներկայացնում հաշվետվությունը՝ գնումների տարեկան հաշվետվությունը կազմելու և հրապարակելու նպատակով:

Լիազորված մարմին:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 5

Հարց 175

Նշվածներից ո՞րն է գնման առարկայի բնութագիր:

Մրցակցության հավասար պայմանների ապահովում հնարավոր մասնակիցների համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 2, կետ 1

Հարց 176

Նշվածներից ո՞րն է գնման առարկայի բնութագրի պահանջներից:

Օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինելն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 2, կետ 3

Հարց 177

Ո՞ր դեպքում գնման առարկայի հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը՝

Հղումներ օգտագործելու դեպքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 5

Հարց 178

Նշվածներից ո՞վ է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին) :

Գնահատող հանձնաժողովը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 26 , մաս 1, կետ 5

Հարց 179

Ո՞վ է հաստատում գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը:

ՀՀ կառավարությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 1, կետ 11

Հարց 180

Շինարարական աշխատանքների գնման համար նշվածներից ո՞ր փաստաթղթերի հիման վրա են նախատեսվում ֆինանսական միջոցներ:

Սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենք հոդված 15, մաս 4

Հարց 181

Նշվածներից ո՞վ ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենք հոդված 7, մաս 1

Հարց 182

Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:

Էլեկտրոնային աճուրդը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 1, կետ 1

Հարց 183

Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:

Գնանշման հարցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված հոդված 18, մաս 1, կետ 3

Հարց 184

Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:

Մեկ անձից գնումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 1, կետ 4

«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 185

Համաձայն Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին օրենքի, որ օրենքով է սահմանվում արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող

ուսումնական հաստատության իրավական կարգավիճակի, դրա ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման կարգի, կառավարման մարմինների, դրանց ձևավորման և լիազորությունների, գույքի օգտագործման ու ֆինանսատնտեսական հարաբերությունների, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների հետ փոխհարաբերությունների առանձնահատկությունները.

«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքով:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենք, հոդված 2, մաս 3, նախադաս. 1)

Հարց 186

Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին օրենքի դրույթները տարածվում են մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի վրա,

եթե այլ բան սահմանված չէ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքով:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենք, 2-րդ հոդված, 3-րդ մաս, նախադաս.2

Հարց 187

Նշվածներից ո՞ր մարմնի որոշմամբ պետական կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կարող է հանդիսանալ:

Միայն հիմնադրի:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 5

Հարց 187

Մասնագիտական ուսումնական հաստատությունը գործունեության ո՞ր տեսակների շրջանակում կարող է հիմնադրի որոշմամբ միայնակ կամ համագործակցությամբ ստեղծել տնտեսական ընկերություն կամ դառնալ դրա մասնակից՝

Օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեության տեսակների շրջանակում՝ լիցենզավորված կրթական ծրագրերի որակավորումներին և զբաղմունքին համապատասխան, ինչպես նաև աշխատանքի վրա հիմնված ուսումնառության մոդելով գործնական աշխատանքային ուսուցման շրջանակներում մատուցել ծառայություն, իրականացնել արտադրություն, արտադրանքի իրացում և վաճառք:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 5.1

Հարց 188

Ի՞նչ իրավունք ունի պետական կազմակերպությունը սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի նկատմամբ:

Օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 2

Հարց 189

Պետական կազմակերպությունն իրեն ամրացված գույքը ո՞ր դեպքում կարող է պետության անունից հանձնել վարձակալության:

Եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին » ՀՀ օրենք, հոդված, 5, մաս 3, պարբ.2

Հարց 190

Ո՞ր դեպքերում պետական կազմակերպության վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարից ստացված դրամական միջոցները կարող են պետական բյուջե չուղղվել:

Այն դեպքերի և չափի, երբ մասնագիտական ուսումնական հաստատության և գործատուների հետ համագործակցության պայմանագրի հիմքով տվյալ վարձակալված տարածքն օգտագործվում է կրթական ծրագրի շրջանակում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության մոդելով գործնական աշխատանքային ուսուցում անցնելու և սահմանված որոշակի աշխատանք կատարելու նպատակով:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»
ՀՀ օրենք, հոդված 5, մաս 3, պարբ.2, նախադաս. 3

Հարց 191

Ու՞մ սեփականությունն է վարձակալության չհանձնված ամրացված գույքի օգտագործման արդյունքում պետական կազմակերպության ստացած եկամուտները:

Պետական կազմակերպության սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ պետական կազմակերպության կանոնադրությամբ:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 3, պարբ.3

Հարց 192

Պետական կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչությունները ստեղծվում են՝

Հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 1

Հարց 193

Նշվածներից ո՞ր մարմինը կարող է հիմնել պետական կազմակերպություն:

Միայն Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս կառավարության:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 2

Հարց 194

Լիազորված պետական մարմինը՝

Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 2, ենթակետ գ

Հարց 195

Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ՝

Եթե լրացել է նրա 65 տարին:

«Պետական ոչ առևտրային կազմակերպն-երի մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 3, ենթակետ բ

Հարց 196

Նշվածներից ո՞ր մարմինն իրավունք ունի հետ վերցնելու պետական կազմակերպությանն ամրացված գույքը:

Հիմնադիրը:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 2

Հարց 197

Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝

Նա իր գործառույթներն իրականացնելիս պետական կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի մեկ տոկոսը:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 3, ենթակետ «է»

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 1

Ինչպե՞ս է իրականացվում կրթական ծրագրերի և նախադպրոցական ծառայությունների լիցենզավորումը:

Օրենքով և ՀՀ կառավարության սահմանած կարգով:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 41, մաս 3

Հարց 2

Ի՞նչը կարող է իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը և նախադպրոցական ծառայությունը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 41, մաս 1

Հարց 3

Ո՞ր մարմինը կարող է հիմնադրել ռազմական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ:

ՀՀ կառավարությունը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, մաս 4

Հարց 4

Նշվածներից ո՞րն է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններից:

Կազմում և հաստատում է ոլորտային որակավորումների շրջանակը, որակավորումների ցանկերը և որակավորումների բնութագրերը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 37, կետ 6.1

Հարց 5

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

Սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 2, կետ 1

Հարց 6

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

Սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 2, կետ 2

Հարց 7

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

Հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 2, կետ 3

Հարց 8

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

Հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 2, կետ 4

Հարց 9

Ուսումնական հաստատությունը ե՞րբ է համարվում ստեղծված:

Հիմնադրի (հիմնադիրների) կողմից հաստատության կանոնադրությունը հաստատելու և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, մաս 2

Հարց 10

Ինչպե՞ս է վերակազմակերպվում ուսումնական հաստատությունը:

Կարող է վերակազմակեպվել միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման ձևերով:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 33, մաս 2

Հարց 11

Ե՞րբ է ուսումնական հաստատության լուծարումը համարվում ավարտված, իսկ դրա գոյությունը՝ դադարեցված:

Իրավաբանական անձանց պետական գրանցման մատյանում այդ մասին գրառում կատարելու պահից:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 35, մաս 4

Հարց 12

Նշվածներից ո՞րն է կրթության բնագավառում՝ ՀՀ կառավարության իրավասություններից:

Պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունների հաստատումը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 36, կետ 5

Հարց 13

Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ներառյալ պետական նմուշի վկայականի և դրա ներդիրի ձևը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 36, կետ 6.1

Հարց 14

Նշվածներից ո՞ր մարմինն է հավաստում անձի կարողությունների և սահմանված որոշակի համեմատելի չափանիշների համապատասխանության փաստը՝ «Կրթության մասին» օրենքով սահմանված ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացների միջոցով:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 37, կետ 9.1

Հարց 15

Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում որակավորումների ազգային շրջանակի և դրա մակարդակների (որակավորումների) ընդհանրական բնութագրերը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 36, կետ ~~3~~ 2.1

Հարց 16

Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում է մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչական պաշտոններին ներկայացվող հիմնական չափանիշները, ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթի կարգը, մրցույթ չհայտարարելու դեպքերը:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 37, կետ 6

Հարց 17

Նշվածներից ո՞ր մարմինն է համաձայնություն տալիս պետական համապատասխան լիազորված մարմնի կողմից ուսումնական հաստատությունների վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 37, կետ 15.1

Հարց 18

Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում պետական և հավատարմագրված ոչ պետական մասնագիտական ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերով և որակավորումներով ընդունելության կարգը:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 37, մաս 9

Հարց 19

Ի՞նչ սահմանափակում է նախատեսված պետական ուսումնական հաստատության տնօրենի, ռեկտորի (պետի) միաժամանակ այլ պաշտոն զբաղեցնելու կամ վճարովի այլ աշխատանք կատարելու վերաբերյալ:

Չի կարող միաժամանակ զբաղեցնել այլ պետական պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 40, մաս 5, 2-րդ պարբ.

Հարց 20

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը՝

Կրթության զարգացման պետական ծրագիրն է:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 4

Հարց 21

Ո՞ր մարմինը և ո՞ւմ ներկայացմամբ է հաստատում կրթության զարգացման պետական ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 4

Հարց 22

Ինչպե՞ս է սահմանվում «կրթություն» հասկացությունը:

Անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, կետ 1

Հարց 23

Ինչպե՞ս է սահմանվում «որակավորումների ազգային շրջանակ (ՈԱՇ)» հասկացությունը «Կրթության մասին» օրենքում:

Կրթության համակարգի բոլոր մակարդակներում շնորհվող որակավորումների բնութագրերի ամբողջություն, որն ընդգրկում է կրթության յուրաքանչյուր մակարդակում ուսումնառության արդյունքների կամ մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքի, կարողունակությունների և հմտությունների ընդհանրական բնութագրիչները:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, կետ 17.2

Հարց 24

Ո՞ր ուսումնական հաստատությունն է կոչվում կրթահամալիր:

Տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորումը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, կետ 8

Հարց 25

Ո՞ր կառույցն է կազմում և հաստատում մասնագիտական կրթության յուրաքանչյուր մակարդակի որակավորման կրթական ծրագրերի պետական ամփոփիչ ստուգման ձևերը և պարբերականությունը:

Մասնագիտական ուսումնական հաստատությունը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 6.1

Հարց 26

Նշվաններից ո՞վքեր կարող են լինել ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր:

Ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, մաս 3

Հարց 27

Ի՞նչ նորմատիվ ակտով են սահմանվում ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները, դրանց ձևավորման կարգը և լիազորությունները:

Ոլորտը կարգավորող օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 40, մաս 4, նախադաս.2

Հարց 28

Նշվածներից, կրթական ծրագրերի մասով ո՞ր փոփոխություններին են սահմանվում լիցենզիայի ներդիրում, և յուրաքանչյուր փոփոխության դեպքում տրվում է հերթական ներդիր:

Սահմանային տեղերի փոփոխությունը, նախադպրոցական տարիքային խմբերով և մասնագիտությունների գծով գործունեության թույլտվությունը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 41, մաս 4

Հարց 29

Ի՞նչ հիմքով համապատասխան ուսումնական հաստատությունը անձին շնորհում տվյալ աստիճանը կամ որակավորումը հավաստող փաստաթուղթ՝ ատեստատ, վկայական, դիպլոմ և դրանց ներդիր:

Կրթական ծրագրի մակարդակների և որակավորման աստիճանների ավարտին և պետական ամփոփիչ ստուգման դրական արդյունքի հիման վրա:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 44, մաս 1

Հարց 30

Ի՞նչ նպատակներով կարող է օգտագործվել պետական ուսումնական հաստատությունների գույքն՝ օտարվելու դեպքում:

Միայն ուսումնական նպատակներով:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 45, մաս 4

Հարց 31

Ի՞նչ նպատակով են իրականացվում լրացուցիչ կրթական ծրագրերը:

Անձի ամբողջ կյանքի ընթացքում մասնագիտական և անձնական կրթական պահանջմունքները բավարարելու նպատակով և համարվում են ոչ ֆորմալ ուսուցում ապահովելու միջոց:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 26, մաս 1

Հարց 32

Ո՞րն է լրացուցիչ կրթական ծրագրերի խնդիրը:

Կատարելագործել, արդիականացնել և լրացնել մինչ այդ ձեռք բերված (նախընթաց) գիտելիքները, կարողությունները, հմտությունները և արժեքները:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 26, մաս 2

Հարց 33

Ինչպե՞ս են կազմակերպվում լրացուցիչ կրթական ծրագրերը:

Վերապատրաստումների, խմբային և անհատական մասնագիտական ուսուցման և կարճաժամկետ ուսուցման դասընթացների միջոցով, որոնց ուսումնառության արդյունքները կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատվել և ճանաչվել:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 26, մաս 3

Հարց 34

Ո՞վ իրավունք ունի մասնակցելու լրացուցիչ կրթական ծրագրին:

Յուրաքանչյուր ոք, ով բավարարում է տվյալ դասընթացի մուտքային պահանջները:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 26, մաս 3.2

Հարց 35

Ի՞նչ է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատումը և ճանաչումը:

Կամավոր գործընթաց է, որը կազմակերպվում, իրականացվում և հավաստագրվում է սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթներով:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 26.1, մաս 1

Հարց 36

Ովքե՞ր են իրականացնում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատումը:

Ուսուցման ազգային ռեեստրում գրանցված կազմակերպության մասնագետները կամ ֆիզիկական անձինք (գնահատողները)՝ սահմանված պահանջներին համապատասխանելու և տվյալ մասնագիտական խմբում ընդգրկվելու միջոցով:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 26.1, մաս 2

Հարց 37

Ինչի՞ համար կարող են հիմք հանդիսանալ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման համակարգով գնահատված ու ճանաչված արդյունքները.

Աշխատաշուկա մուտք գործելու և կոնկրետ աշխատանք կատարելու կամ զբաղմունք իրականացնելու համար:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 26.1, մաս 3

«ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 38

Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են՝

գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները:

«Լեզվի մասին» ՀՀ օրենք հոդված 4, 2-րդ պարբերություն ա/ ենթակետ

Հարց 39

Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը՝

պարտադիր է:

«Լեզվի մասին» ՀՀ օրենք հոդված 2, 5-րդ պարբ.

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 40

Ի՞նչ հարաբերություններ է կարգավորում «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքը:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի գործունեության, կառավարման ու ֆինանսատնտեսական հարաբերությունները:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 1, մաս 1)

Հարց 41

Որքանո՞վ է «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքը տարածվում սոցիալական գործընկերության հիման վրա որոշակի կրթական ծրագիր իրականացնող կամ դրան մասնակից կազմակերպությունների վրա:

Այնքանով, որքանով վերաբերում է կրթության և ուսուցման գործընթացին:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 1, մաս 3)

Հարց 42

Ինչպե՞ս է սահմանվում մասնագիտական կրթություն հասկացությունը:

Առնվազն հիմնական կրթության հիմքով արհեստավորի (կամ կրտսեր մասնագետի) կամ մասնագետի որակավորում շնորհող մակարդակներում իրականացվող ուսումնառության արդյունքներ ձևավորելու գործընթաց:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 1)

Հարց 43

Ինչպե՞ս է սահմանվում «մասնագիտական ուսուցում» հասկացությունը:

Անձի կամ կազմակերպության գնահատված կարիքներին և ձևավորված պատվերին համապատասխան՝ լրացուցիչ կրթական ծրագրով իրականացվող ուսումնառություն, որով անձը ձեռք է բերում որոշակի աշխատանքի կամ զբաղմունքի նկարագրով սահմանված գիտելիք, կարողություն և հմտություն (կարողունակություն) կամ ունեցածը հարմարեցնում դրանց:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 2)

Հարց 44

Ինչպե՞ս է սահմանվում «մասնագիտական ուսումնական հաստատություն՝ ՄՈՒՀ» հասկացությունը:

Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մասնագիտական կրթության արհեստագործական կամ միջին մասնագիտական մակարդակի առնվազն մեկ որակավորման ծրագիր, կազմակերպում է մեթոդական և աշխատանքային գործունեություն, շնորհում որակավորում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 3)

Հարց 45

Նշվածներից ո՞րն է արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ՄՈՒՀ:

Քոլեջը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 4)

Հարց 46

Ինչպե՞ս է սահմանվում «մասնագիտական կրթության ոլորտային որակավորումների շրջանակ» հասկացությունը:

Մասնագիտական կրթության ոլորտային որակավորումների շրջանակ՝ ոլորտային որակավորումների շրջանակի բաղկացուցիչ մաս, որով սահմանվում են մասնագիտական կրթության մակարդակի որակավորումների խումբը (ցանկը) և դրա հետ կապված ուսումնառության ընդհանուր վերջնարդյունքներն ապահովելու պահանջները (բնութագիրը):

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 5)

Հարց 47

Ինչպե՞ս է սահմանվում «կրթական ծրագիր» հասկացությունը:

Ուսումնական և աշխատանքային բաղադրիչների ամբողջություն, որն իրականացվում է ուսումնառության որոշակի վերջնարդյունքներով պայմանավորված հաջորդականությամբ, և որով սահմանվում է մասնագիտական կրթության մակարդակը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 6)

Հարց 48

Ինչպե՞ս է սահմանվում «ուսումնառության ժամկետ» հասկացությունը:

Համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի համար սահմանված ուսումնառության նորմատիվային տևողություն:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 7)

Հարց 49

Ինչպե՞ս է սահմանվում «ուսումնական մոդուլ» հասկացությունը:

Կրթական ծրագրի բաղադրիչ հանդիսացող դասընթացի ինքնուրույն բաղկացուցիչ մաս, որի համար տրվում է կրեդիտ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 8)

Հարց 50

Ինչպե՞ս է սահմանվում «ուսումնառության վերջնարդյունք» հասկացությունը:

Դասընթացի կամ կրթական ծրագրի ավարտին պահանջվող գիտելիքի և կարողունակությունների ամբողջություն:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 9)

Հարց 51

Ինչպե՞ս է սահմանվում «կրեդիտ» հասկացությունը:

Դասընթացի կամ ուսումնական մոդուլի, այդ թվում՝ աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ծավալի, ուսումնառության (նաև աշխատանքային) վերջնարդյունքներ ձեռք բերելու համար ուսանողի ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավոր:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 10)

Հարց 52

Ինչպե՞ս է սահմանվում «կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ» հասկացությունը:

Ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման, ուսանողների սահուն շարժունությունը ապահովող գործողությունների ամբողջություն:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 11)

Հարց 53

Ինչպե՞ս է սահմանվում «սոցիալական գործընկերություն» հասկացությունը:

ՄՈՒՀ-երի, գործատուների, դրանց միավորումների և ոչ առևտրային այլ կազմակերպությունների, արհեստակցական միությունների, հանրային իշխանության մարմինների միջև աշխատաշուկայի և տնտեսության զարգացման կարիքներին համապատասխան կրթության ապահովմանը միտված համընդհանուր համաձայնեցված կրթական, աշխատանքային, գործընկերային ու սոցիալական համագործակցության ձև:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 12)

Հարց 54

Ինչպե՞ս է սահմանվում «աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն (ԱՀՈՒ)» հասկացությունը:

Ուսումնառության կազմակերպման ձև, որն իրականացվում է իրական աշխատավայրում կամ դրան համապատասխանեցված աշխատանքային միջավայրում՝ ապահովելով ուսումնառության վերջնարդյունքներին միտված աշխատանքային կարողունակությունների ձեռքբերումը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 13)

Հարց 55

Ինչպե՞ս է սահմանվում «հեռավար ուսուցում» հասկացությունը:

Հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման ձև և համաժամանակյա ու ապահամաժամանակյա (ասինքրոն) իրականացման մեթոդ, որով մանկավարժական աշխատողի (դասավանդողի) և ուսանողների (ունկնդիրների) միջև անմիջական կամ ոչ անմիջական հաղորդակցումն իրականացվում է ուսուցման կառավարման հարթակների և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների միջոցներով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 14)

Հարց 56

Ինչպե՞ս է սահմանվում «դրսեկություն» հասկացությունը:

Հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը ինքնակրթության կամ աշխատանքի վրա հիմնված ուսումնառության միջոցով կազմակերպելու ձև, որով ուսումնառությունն իրականացվում է մանկավարժական աշխատողի (դասավանդողի) անմիջական և ոչ անմիջական խորհրդատվության,

թեմատիկ առաջադրանքների ուղղորդման, ինչպես նաև ուսանողի (ունկնդրի) վերջնարդյունքների ամփոփման միջոցով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 15)

Հարց 57

Ինչպե՞ս է սահմանվում «պետական ամփոփիչ ստուգում» հասկացությունը:

Մասնագիտական կրթության համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին շրջանավարտի գիտելիքի, կարողունակությունների համապատասխանության ստուգման և գնահատման գործընթաց, որի դրական արդյունքով շնորհվում է համապատասխան որակավորում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 16)

Հարց 58

Ինչպե՞ս է սահմանվում «մասնագիտական կրթության որակավորում (որակավորում)» հասկացությունը.

Անձին շնորհվող արհեստավորի (կամ կրտսեր մասնագետի) կամ մասնագետի կրթական աստիճան, որը հավաստում է ՄԿՈՒ համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի ուսումնառության ավարտը և հաստատվում համապատասխան ավարտական փաստաթղթով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 17)

Հարց 59

Ինչպե՞ս է սահմանվում «ՄՈՒՀ-ի հավատարմագրում» հասկացությունը:

Որակի արտաքին գնահատման գործընթաց, որով հավաստվում է ՄՈՒՀ-ի կամ դրա կրթական ծրագրի համապատասխանությունը հավատարմագրման սահմանված չափանիշներին:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 18)

Հարց 60

Ինչպե՞ս է սահմանվում «ուսանող» հասկացությունը:

Մասնագիտական կրթության որևէ մակարդակի կրթական ծրագրով և որակավորմամբ ուսումնառող անձ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 19)

Հարց 61

Ինչպե՞ս է սահմանվում «ունկնդիր» հասկացությունը.

Մասնագիտական կրթության լրացուցիչ կրթական ծրագրում ընդգրկված և ուսումնառող անձ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 20)

Հարց 62

Ինչպե՞ս է սահմանվում «աշկերտ» հասկացությունը:

Միաժամանակ ՄՈՒՀ-ում և աշխատավայրում (ուսումնագործնական կենտրոնում) աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն անցնող և գործատուի հետ աշխատանքային հարաբերության մեջ գտնվող ուսանող (ունկնդիր):

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 21)

Հարց 63

Ինչպե՞ս է սահմանվում «կրթաթոշակ» հասկացությունը:

Կրթական ծառայությունների և կրթությանը ուսանողի մասնակցությանը օժանդակող ծառայությունների ծախսերի լրիվ կամ մասնակի փոխհատուցում կամ ուսանողին հատկացվող այլ ֆինանսավորում պետական բյուջեի միջոցների, ՄՈՒՀ-ի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին կամ միջազգային պայմանագրերի շրջանակում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 22)

Հարց 64

Ինչպե՞ս է սահմանվում «կրթության առանձնահատուկ պայմաններ» հասկացությունը:

Համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերմանը նպատակաուղղված մոդուլների և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, մատչելի միջավայրի և խելամիտ հարմարեցումների, ինչպես նաև

կրթական գործընթացին անձի մասնակցությանը նպատակաուղղված մանկավարժահոգեբանական և այլ ծառայությունների ամբողջություն:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 23)

Հարց 65

Ինչպե՞ս է սահմանվում «խելամիտ հարմարեցում» հասկացությունը.

Ուսանողի (ունկնդրի) և ՄՈՒՀ-ի կողմից փոխհամաձայնեցված փոփոխություններ կամ հարմարեցումներ (այլընտրանքային մատչելի ձևաչափեր, օժանդակ սարքավորումներ և տեխնոլոգիական միջոցներ, լրացուցիչ ժամանակ, անհատականացված աջակցություն և այլն), որոնք բխում են անձի անհատական կարիքներից և նախասիրություններից, չեն խաթարում ՄԿՈՒ ծրագրի ամբողջականությունն ու վերջնարդյունքները և հնարավորություն են տալիս հաշմանդամություն ունեցող անձին բոլորի հետ հավասար հիմունքներով մասնակցելու մասնագիտական կրթության և ուսուցման գործընթացին և հասնելու գնահատելի և չափելի վերջնարդյունքի:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 24)

Հարց 66

Ինչպե՞ս է սահմանվում «ներառական կրթություն» հասկացությունը.

Յուրաքանչյուր ուսանողի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և կրթական ծրագրով սահմանված վերջնարդյունքի ապահովում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 25)

Հարց 67

Ինչպե՞ս է սահմանվում « մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» հասկացությունը:

Ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է ուսանողին, նրա օրինական ներկայացուցչին և մանկավարժական աշխատողին:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 26)

Հարց 68

Ինչպե՞ս է սահմանվում «անհատական ուսուցման պլան» հասկացությունը:

Անհատականացված ճանապարհային քարտեզ, որն ուրվագծում է մասնագիտական կրթություն և ուսուցում ստացող ուսանողի կարիերայի ուղին, գնահատում է ուսանողի կարողունակությունները, սահմանում է կարիերայի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կոնկրետ թիրախներ, գործողություններ և ռեսուրսներ, ինչպես նաև օժանդակող կառուցակարգեր (ներառյալ աջակցող ծառայությունները):

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 27)

Հարց 69

Ինչպե՞ս է սահմանվում «ՄԿՈՒ մանկավարժական աշխատող » հասկացությունը:

Ուսանողի ուսումնառության մոդուլների յուրացմանը նպաստող կամ համապատասխան որակավորման ուղղվածության բովանդակության պահանջներն ապահովող ՄՈՒՀ-ի աշխատող, ինչպես նաև կազմակերպությունում աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն իրականացնող մասնագիտական ուսուցման հրահանգիչ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 28)

Հարց 70

Ինչպե՞ս է սահմանվում «դասախոս» հասկացությունը:

ՄԿՈՒ մանկավարժական աշխատող, որը դասապրոցեսի միջոցով ապահովում է ուսանողի (ունկնդրի) կողմից ուսումնառության վերջնարդյունքները յուրացվելու գործընթացը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 29)

Հարց 71

Ինչպե՞ս է սահմանվում «գործնական ուսուցման վարպետ (վարպետ)» հասկացությունը:

ՄԿՈՒ մանկավարժական աշխատող, որն ապահովում է ուսանողի (ունկնդրի) կողմից գործնական ուսումնառության արդյունքներն ու արհեստագործական հմտությունները յուրացվելու գործընթացը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 30)

Հարց 72

Ինչպե՞ս է սահմանվում «մասնագիտական ուսուցման հրահանգիչ (հրահանգիչ)» հասկացությունը:

Սոցիալական գործընկերության կողմ կազմակերպության (գործատու) մասնագետ, որը մանկավարժական աշխատողի կարգավիճակ է ստանում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ծրագրի շրջանակում և ապահովում է գործնական ուսումնառության արդյունքների կիրառական հմտությունների կատարելագործման գործընթացը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 31)

Հարց 72

Ինչպե՞ս է սահմանվում «ՄԿՈՒ մանկավարժական աշխատողի օգնական» հասկացությունը:

Կրթության կազմակերպման գործընթացում դասախոսին և վարպետին, անհրաժեշտության դեպքում հրահանգչին աջակցող մանկավարժական աշխատող:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 32)

Հարց 72

Ինչպե՞ս է սահմանվում «ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողի ատեստավորում» հասկացությունը:

Դասախոսի, վարպետի կամ հրահանգչի աշխատանքային կարողունակությունների՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության որոշման գործընթաց:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 34)

Հարց 73

Ինչպե՞ս է սահմանվում «տարակարգ» հասկացությունը:

Դասախոսի, վարպետի կամ հրահանգչի մասնագիտական չափանիշներին համապատասխանող աստիճանակարգ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 35)

Հարց 74

Ինչպե՞ս է սահմանվում «մասնագիտական չափանիշ» հասկացությունը:

Դասախոսի, վարպետի կամ հրահանգչի մասնագիտական զարգացման և գիտելիքների, աշխատանքային գործունեության, կարողունակությունների, պատասխանատվության նկարագիր:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 36)

Հարց 75

Մասնագիտական կրթությունը և ուսուցումը համակարգված կրթական գործընթաց են, որոնցով անձի մեջ ձևավորվում են անհրաժեշտ մասնագիտական կարողություններ և աշխատանքային փորձ կուտակելու հնարավորություն՝ (շարունակեք):

Որակավորված մասնագիտական գործունեություն իրականացնելու, ներկայի և ապագայի մարտահրավերներին դիմակայելու, փոփոխվող աշխատաշուկային արձագանքելու, նոր պայմաններին հարմարվելու, շարունակական մասնագիտական կատարելագործման ու զարգացման համար:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 4, մաս 1)

Հարց 76

Հայաստանի Հանրապետությունը որպես ի՞նչ է հռչակում համընդհանուր ներառական կրթությունը:

Յուրաքանչյուր ուսանողի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 4, մաս 2, առաջին հատված)

Հարց 77

Հայաստանի Հանրապետությունը որպես ի՞նչ է հռչակում աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը.

Աշխատաշուկայում մրցունակության ապահովման երաշխիք:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 4, մաս 2, երկրորդ հատված)

Հարց 78

Նշվածներից ո՞րը ՄԿՈՒ բնագավառում պետական քաղաքականության սկզբունք չէ:

Նպաստել պատշաճ մասնագիտական կարողություններ ունեցող անձանց զբաղվածություն ունենալուն, արժանապատիվ աշխատանք գտնելուն և ձեռներեցությամբ զբաղվելուն:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 4, մաս 3, կետ 1, 5, 7
և հոդված 5, մաս 1, կետ 5)

Հարց 79

Հաշվի առնելով աշխատուժի շուկայի կազմը և կառուցվածքը, մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում պետությունը, նշվածներից ո՞րն է սահմանում յուրաքանչյուր անձի համար երաշխիքներից մեկը:

Մրցութային կարգով մասնագիտական կրթություն պետական բյուջեի միջոցների հաշվին:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 4, մաս 4, կետ 2)

Հարց 80

Պետությունն աջակցում է ՄՈՒՀ-երի ուսանողների, ունկնդիրների մասնագիտական ոլորտներում:

Աշխատանքային կարողունակությունների ձևավորման ծրագրերին և դրանց կազմակերպմանը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 4, մաս 5)

Հարց 81

Նշվածներից ընտրեք ՄԿՈՒ բնագավառում պետական քաղաքականության երեք խնդիր:

- *Վերացնել անհավասարությունները կրթության ոլորտում և ապահովել հավասար հասանելիություն մասնագիտական կրթության և ուսուցման բոլոր մակարդակներում, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար.*
- *սահմանել աշխատաշուկայի ներկայի և ապագայի կարիքներին միտված որակավորումների ոլորտային շրջանակ՝ առաջնորդվելով պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքով.*
- *ապահովել սովորողների կարիերայի ուղղորդումը և մասնագիտական կողմնորոշումը՝ նպաստելով որակավորման ընտրության, կարիերայի ուղու և մասնագիտական աճի, զբաղվածության և աշխատաշուկայում մրցունակության հարցերում գիտակցված որոշումների կայացմանը:*

(ՄԿՈՒ օրենք, հոդված 5, մաս 1, կետ 2,4,12)

Հարց 82

Ի՞նչ պահանջների համապատասխան են կազմվում մասնագիտական կրթական ծրագրերը:

Որակավորումների ազգային շրջանակի և ոլորտային որակավորումների շրջանակի:
(ՄԿՈՒ օրենք, հոդված 7, մաս 1)

Հարց 83

Նշվածներից ո՞ր կրթական ծրագրերի մակարդակում և որակավորմամբ է իրականացվում մասնագիտական կրթություն:

Արհեստագործական հիմնական կրթական ծրագիր՝ արհեստավորի կամ կրտսեր մասնագետի որակավորում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 7, մաս 2, կետ 1)

Հարց 84

Նշվածներից ո՞ր կրթական ծրագրերի մակարդակում և որակավորմամբ է իրականացվում մասնագիտական կրթություն:

Միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագիր՝ մասնագետի որակավորում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 7, մաս 2, կետ 2)

Հարց 85

Ի՞նչ ծրագրեր կարող է մշակել և իրականացնել ՄՈՒՀ՝ իր կողմից իրականացվող համապատասխան մակարդակի որակավորման ծրագրի հիման վրա:

Վերջնարդյունք ապահովող միկրոորակավորման ծրագրեր:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 7, մաս 4)

Հարց 86

Թվարկվածներից նշեք յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագրի երկու բաղադրիչ:

- Որակավորման ուղղվածությունը, զբաղմունքի նկարագիրը և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները.
- ուսանողի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը՝ արտահայտված կրեդիտներով, և ուսումնառության նվազագույն տևողությունը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 7, մաս 8, կետ 1,3)

Հարց 87

Թվարկվածներից նշեք յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագրի երկու բաղադրիչ:

- Ծրագրի բովանդակությունը՝ որակավորումն ապահովող դասընթացների կամ մոդուլների ցանկը և յուրաքանչյուր դասընթացին կամ մոդուլին հատկացվող կրեդիտը.
- շնորհվող որակավորումը և հետագա մասնագիտական գործունեության հնարավոր ոլորտը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 7, մաս 8, կետ 4,6)

Հարց 88

Թվարկվածներից նշեք յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագրի երկու բաղադրիչ:

- Որակավորմանը ներկայացվող մուտքային և ելքային պահանջները, ներառյալ պետական ամփոփիչ ստուգման ձևերը և պարբերականությունը.
- որակավորման առանձնահատկություններով պայմանավորված համապատասխան լաբորատորիաների և ուսումնաարտադրական տարածքների (արհեստանոցների) գույքի և սարքավորումների նվազագույն պահանջները և չափաքանակը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 7, մաս 8, կետ 2,5)

Հարց 89

Ինչպե՞ս է ՄՈՒՀ-ը կազմում համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի կազմակերպման նախահաշիվը՝

ըստ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած չափանիշների:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 7, մաս 10)

Հարց 90

Կարո՞ղ են արդյոք առանձին կրթական ծրագրերի և դրանց որակավորումների համար սահմանվել իրականացման և կառավարման առանձնահատկություններ:

Այո, միջազգային պայմանագրերի հիման վրա, օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով՝ պահպանելով ոլորտային որակավորումների շրջանակի պահանջները:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 7, մաս 15)

Հարց 91

Որքա՞ն է արհեստավորի կամ կրտսեր մասնագետի որակավորման աստիճան ստանալու համար հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը:

Վեց ամսից մինչև երեք տարի:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 2)

Հարց 92

Որքա՞ն է մասնագետի որակավորման աստիճան ստանալու համար հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը:

Մեկ տարի տասն ամսից մինչև հինգ տարի է:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 3)

Հարց 93

Կարո՞ղ է արդյոք որակավորումը ուսանողին շնորհվել սահմանված ժամկետից շուտ կամ ուշ:

Այո, որակավորման ծրագրով սահմանված վերջնարդյունքները ուսանողի կողմից ձեռք բերվելու ունակություններով պայմանավորված՝ ուսանողի դիմումով, գործատուի և ՄՈՒՀ-ի համաձայնությամբ՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 4)

Հարց 94

Ի՞նչ բեռնվածությամբ կարող է իրականացվել կրթական ծրագրերը, ըստ մասնագիտական կրթության մակարդակների:

Լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ՝ համադրելով առկա, հեռավար կամ դրսեկության մեթոդաբանական ձևերը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 5)

Հարց 95

Մասնագիտական կրթության ծրագրով **մասնակի** բեռնվածությամբ ուսումնառող ուսանողը որքա՞ն կրեդիտ է պարտավոր կուտակել ՄՈՒՀ-ի տվյալ կրթական ծրագրով սահմանված ուսուցման համար նախատեսված ժամկետում:

Տարեկան ուսումնական բեռնվածության առնվազն 50 տոկոսին համապատասխան գումարային կրեդիտներ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 6, առաջին նախադասություն)

Հարց 96

Որքա՞ն ժամանակով կարող է երկարաձգվել մասնակի բեռնվածությամբ ուսումնառող ուսանողի ուսումնառության ընդհանուր տևողությունը.

Համապատասխան կրթական ծրագրի որակավորման համար սահմանված տևողության մինչև կրկնապատիկի չափով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 6, երկրորդ նախադասություն)

Հարց 97

Ինչպե՞ս է սահմանվում մասնագիտական կրթության ուսումնառության ժամկետները:

Համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի բաղադրիչով՝ հիմք ընդունելով ուսանողի մինչև այդ ստացած կրթությունը կամ կրեդիտների քանակը, տվյալ որակավորման ուսուցման առանձնահատկությունը և կրթության կազմակերպման մեթոդաբանական ձևը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 7)

Հարց 98

Ո՞ր դեպքում չի արգելվում միաժամանակ մեկից ավելի կրթական ծրագրերում ուսումնառության զուգակցումը:

Չի արգելվում, եթե դասընթացների կազմակերպման ռեժիմը չի համընկնում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 8)

Հարց 99

Ո՞ր դեպքում մասնագիտական կրթության համապատասխան մակարդակի ավարտական փաստաթուղթ ստացած անձինք իրավունք ունեն շարունակելու ուսումնառությունը հաջորդ մակարդակի կրթական ծրագրով:

Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով՝ հիմք ընդունելով ձեռք բերած կրեդիտների քանակը կամ համեմատվող ծրագրերի ակադեմիական տարբերությունների ողջամիտ ծավալը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 9)

Հարց 100

Ո՞րն է ՄՈՒՀ-ում դասավանդման լեզուն.

Գրական հայերենը, անհրաժեշտության դեպքում՝ նաև հայերեն ժեստերի լեզուն:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 10)

Հարց 101

Թվարկածներից նշեք երեք դեպք, երբ ուսումնական մոդուլներ, դասընթացներ կամ դրանց առանձին թեմաներ կարող են ՄՈՒՀ-ի սահմանած կարգով դասավանդվել օտար լեզվով:

- Եթե դասընթացն իրականացնում է օտարերկրյա մասնագետը.
- օտարերկրյա ՄՈՒՀ-ի հետ համատեղ իրականացվող համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի դեպքում.
- օտարերկրյա քաղաքացիների համար իրականացվող համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի դեպքում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 11, կետ 2,3,4)

Հարց 102

Ինչպե՞ս է սահմանվում ուսումնական գործընթացի կազմակերպման սկիզբը և ավարտը, դասերի կազմակերպման ռեժիմը (ժամերը և գրաֆիկը), ինչպես նաև ուսանողի արձակուրդի տևողությունը:

Սահմանում է ՄՈՒՀ-ը՝ հաշվի առնելով համապատասխան կրթական ծրագրի կազմակերպման, այդ թվում՝ գործնական աշխատանքային ուսուցման առանձնահատկությունները և սահմանված ուսումնառության նվազագույն տևողությունը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 8, մաս 12)

Հարց 103

Ուսումնական հաստատության ո՞ր տեսակն է սահմանվում մասնագիտական կրթության համակարգում:

«Քոլեջ»:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 9, մաս 3)

Հարց 104

Թվարկածներից նշել երկու գործառույթ, որոնք իրականացնում է ՄՈՒՀ-ը, օրենքին, իր կանոնադրությանը, ինչպես նաև տվյալ ոլորտը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

- Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման խորհրդատվության տրամադրումը.
- համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպումը, ուսուցման անհրաժեշտ մեթոդների և տեխնոլոգիաների ընտրությունը, ընթացիկ և պետական ամփոփիչ ստուգման կազմակերպումը՝ ըստ կրթական ծրագրի և որակավորման պահանջների:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 10, մաս 1, կետ 3,4)

Հարց 105

Թվարկածներից նշել երկու գործառույթ, որոնք իրականացնում է ՄՈՒՀ-ը, օրենքին, իր կանոնադրությանը, ինչպես նաև տվյալ ոլորտը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

- ՄԿՈՒ որակի շարունակական բարելավումը, դասավանդման, ուսումնառության արդիական մեթոդների ներդրումը, դրանց բազմազանության և արդյունավետության ապահովումը.
- ուսանողների ուսումնառության դադարեցումը, տեղափոխումը և ուսանողական իրավունքների վերականգնումը՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 10, մաս 1, կետ 5,7)

Հարց 106

Ո՞ր գործառույթ է իրականացնում ՄՈՒՀ-ը, օրենքին, իր կանոնադրությանը, ինչպես նաև տվյալ ոլորտը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց անհրաժեշտ ծառայությունների, այդ թվում՝ խելամիտ հարմարեցումների ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով կրթության արդյունավետ և որակյալ կազմակերպման համար:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 10, մաս 1, կետ 8)

Հարց 107

Նշվածներից ու՞մ գործունեություն է արգելվում ՄՈՒՀ-ում.

Քաղաքական, կուսակցական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 10, մաս 2)

Հարց 108

Ի՞նչ հիմքերով է իրականացվում մասնագիտական կրթության համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագիրը:

Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական աստիճանում կրթական ծրագրի իրականացման իրավունքի, ինչպես նաև յուրաքանչյուր որակավորման լիցենզիայի հիման վրա՝ Կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 11, մաս 1)

Հարց 109

Նշվածներից ո՞րն է մասնագիտական կրթության համապատասխան մակարդակներում կրթական ծրագրի իրականացման իրավունքի տրամադրման պայմաններից:

Կրթական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ շենքի և ուսումնական տարածքի առկայությունը, որի նկատմամբ ՄՈՒՀ-ն ունի սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքներ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 11, մաս 3, կետ 1)

Հարց 110

Նշվածներից ո՞րն է մասնագիտական կրթության համապատասխան մակարդակներում կրթական ծրագրի իրականացման իրավունքի տրամադրման պայմաններից:

Ուսումնական գործընթացին օժանդակող մարզական տարածքի կամ դրա օգտագործման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի առկայությունը և գրադարանային համապատասխան հագեցվածությամբ տարածքների առկայությունը՝ լիազոր մարմնի սահմանած սանիտարահիգիենիկ և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 11, մաս 3, կետ 2)

Հարց 111

Նշվածներից ո՞րն է մասնագիտական կրթության համապատասխան մակարդակի յուրաքանչյուր որակավորման համար լիցենզիայի տրամադրման պայմաններից:

Համապատասխան կրթական ծրագրի մակարդակի որակավորումն (ուղղվածությունը) ապահովող ուսումնամեթոդական փաթեթի առկայությունը (ուսումնական մոդուլները, ուսումնական պլանները, ծրագրի իրականացման ձևը):

(ՄԿՈՒ օրենք, հոդված 11, մաս 6, կետ 1)

Հարց 112

Համապատասխան կրթական մակարդակում մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում ապահովելու համար անհրաժեշտ մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների կազմում որքա՞ն է կազմում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը:

Մանկավարժական աշխատողների թվի առնվազն 30 տոկոսը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 11, մաս 6, կետ 4)

Հարց 113

Ի՞նչ փաստաթուղթ է ընդգրկվում լիցենզավորման փաթեթում, եթե մասնագիտական կրթության ծրագրերի մակարդակներում որոշակի որակավորման ուսումնառությունը կազմակերպվելու է հիմնական կրթության հիմքով.

Միջնակարգ կրթության երրորդ մակարդակի պետական բաղադրիչն ապահովող կրթական ծրագիրը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 11, մաս 7)

Հարց 114

Ինչպե՞ս է տրվում նոր ստեղծվող ՄՈՒՀ-ի կրթական ծրագրի իրականացման իրավունքը:

Առնվազն մեկ որակավորման համար լիցենզիայի հետ միաժամանակ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 11, մաս 8)

Հարց 115

ՄՈՒՀ-ին ի՞նչ ժամկետով է տրվում կրթական ծրագրի իրականացման իրավունքը և համապատասխան որակավորման լիցենզիան:

Անժամկետ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 11, մաս 9)

Հարց 116

Ո՞ր մարմինը կարող է դադարեցնել ՄՈՒՀ-ին տրված համապատասխան մակարդակի կրթական ծրագրի իրականացման կամ որակավորման լիցենզիայի գործողությունը:

Լիազոր մարմինը՝ «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 11, մաս 10)

Հարց 117

Ի՞նչ է մասնագիտական կրթության որակի գնահատումը և ինչպե՞ս է իրականացվում:

ՄՈՒՀ-ի, դրա կրթական ծրագրերի, ուսանողի կարիերայի հետագծի և հնարավորությունների, մշտադիտարկման, գնահատման և բարելավման շարունակական գործընթաց է, որն իրականացվում է ներքին և արտաքին գնահատման՝ Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 12, մաս 1)

Հարց 118

Ե՞րբ է իրականացվում ներքին գնահատումը (որակի):

Տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 12, մաս 3, երկրորդ նախադասություն)

Հարց 119

Ովքե՞ր են մասնակցում ներքին գնահատմանը:

Վարչական և մանկավարժական աշխատողները, ուսանողները, ԱՀՈՒ-ի իրականացմանը մասնակից գործատուների ներկայացուցիչները:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 12, մաս 3, երրորդ նախադասություն)

Հարց 120

Ի՞նչ է արտաքին գնահատումը (որակի):

Պետության սահմանած չափանիշներին համապատասխան, ՄՈՒՀ-ի կառավարման և գործունեության արդյունավետության գնահատումն է նախորդ ժամանակահատվածի արդյունքների, ներդրված փորձարարական ծրագրերի կամ մյուս ՄՈՒՀ-երի համեմատ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 12, մաս 4)

Հարց 121

Ովքե՞ր կարող են մասնակցել որակի արտաքին գնահատմանը:

ՄՈՒՀ-ի շրջանավարտները և ուսանողները, կրթության և այլ մասնագիտական ոլորտների կառավարման պետական լիազոր մարմինները, ՄՈՒՀ-ի սոցիալական գործընկերության կողմ հանդիսացող կազմակերպությունների ներկայացուցիչները:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 12, մաս 4)

Հարց 122

Ո՞ր մարմինն է հաստատում ՄՈՒՀ-ի հավատարմագրման կարգը, չափանիշները և հավատարմագրի գործողության ժամկետները:

Կառավարությունը՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացմամբ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 13, մաս 1, նախ.2)

Հարց 123

Ինչպե՞ս է իրականացվում ՄՈՒՀ-ի ընդունելությունը:

Մրցութային հիմունքներով՝ ըստ կրթական ծրագրի մակարդակների և որակավորումների:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 1)

Հարց 124

Ո՞ր դեպքում ՄՈՒՀ-ն իրավունք ունի հայտարարելու ընդունելություն:

Միայն կրթական ծրագրի համապատասխան մակարդակի իրականացման իրավունքի և որակավորման լիցենզիայի առկայության դեպքում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 2)

Հարց 125

Ինչպե՞ս է ըստ ՄՈՒՀ-երի հատկացվում փոխհատուցման ենթակա ընդունելության տեղերը:

Կրթական ծրագրերի մակարդակներին և որակավորումներին համապատասխան՝ ընդհանուր տեղերի շրջանակում, հիմք ընդունելով ՄՈՒՀ-երի նախնական հիմնավորված հայտերը, կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի կողմից:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 5, նախադասություն 1)

Հարց 126

Կարո՞ղ են արդյոք ՄՈՒՀ-երը կատարել վճարովի ընդունելություն:

ՄՈՒՀ-երը կարող են յուրաքանչյուր որակավորման (ուղղվածության) համար լիցենզիայով հատկացված սահմանային տեղերի շրջանակում կատարել վճարովի ընդունելություն:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 5, նախադասություն 2)

Հարց 127

Ինչպե՞ս է անցկացվում ՄՈՒՀ ընդունելության մրցույթը:

ՄՈՒՀ-ի որակավորումների և մասնագիտական ուղղվածությամբ սահմանված տեղերի, կրթության կառավարման տեղեկատվական համակարգում գրանցված դիմորդների հայտերի հիման վրա:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 6, նախ. առաջին հատված)

Հարց 128

Ի՞նչ ժամկետում է անցկացվում ՄՈՒՀ ընդունելությունը:

Ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից մինչև ընդունելության կարգով սահմանված վերջնաժամկետը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 6, նախ. երկրորդ հատված)

Հարց 129

Ի՞նչ ժամկետում մշակույթի, սպորտի ոլորտի որակավորման կրթական ծրագրերի մակարդակներով և ուղղվածությամբ ընդունելություն իրականացնող ՄՈՒՀ-երը հրապարակում ընդունելության համար անհրաժեշտ մասնագիտական քննությունների պայմանները:

Համապատասխան ուսումնական տարվանից ոչ ուշ, քան մեկ տարի առաջ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 7, նախ.առաջին)

Հարց 130

Ի՞նչ պայմաններ են ամրագրվում ՄՈՒՀ-ի և ուսանողի (նրա օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրում:

Ուսումնառության առավելագույն տևողությունը, տվյալ մասնագիտության կրթական ծրագրի համար նախատեսված ուսման վարձի տարեկան չափը և կրեդիտների ընդհանուր քանակը, որակավորումից և համապատասխան զբաղմունքից բխող գործնական ուսուցման առանձնահատկությունները, ինչպես նաև օրենքով ու ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված այլ պայմաններ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 13, նախ.առաջին)

Հարց 131

Կարո՞ղ է ուսանողի հետ կնքված պայմանագրի պայմանները փոփոխվել ուսումնառության ամբողջ ընթացքում:

Փոփոխման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխությունը բարենպաստ է ուսանողի համար:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 13, նախ.երկրորդ)

Հարց 132

Կարո՞ղ է ուսումնառությունը դադարեցրած անձի ուսանողական իրավունքը վերականգնվել:

Կարող է՝ անկախ ուսումնառությունը դադարեցնելու պատճառներից և ժամկետներից:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 14)

Հարց 133

Նշվածներից ո՞րն է ուսումնառությունը դադարեցրած կամ մեկ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխվելու կամ մեկից ավելի կրթական ծրագրով կրթություն ստանալու միջոցով կրթական ծրագրի համապատասխան մակարդակի որակավորման որոշակի փուլ մուտք գործելու և ուսումնառությունը շարունակելու ցանկության դեպքում անհրաժեշտ հիմքերից:

Համապատասխան որակավորման (ուղղվածության) համար լիցենզիայով հատկացված սահմանային տեղերի առավելագույն քանակը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 15, կետ 1)

Հարց 134

Նշվածներից ո՞րն է ուսումնառությունը դադարեցրած կամ մեկ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխվելու կամ մեկից ավելի կրթական ծրագրով կրթություն ստանալու միջոցով կրթական ծրագրի համապատասխան մակարդակի որակավորման որոշակի փուլ մուտք գործելու և ուսումնառությունը շարունակելու ցանկության դեպքում անհրաժեշտ հիմքերից:

Առկա կրեդիտների, կրթական ծրագրով և ուսումնական պլանով սահմանված մոդուլների ծավալի, բովանդակության համապատասխանությունը և ակադեմիական տարբերությունը, որոնք ստուգվում են տվյալ ուսանողի ուսումնառած և այդ պահին գործող կրթական ծրագրով սահմանված վերջնարդյունքների համեմատ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 15, կետ 2)

Հարց 135

Ուսումնառությունը դադարեցրած անձի ուսումնառությունը հետագայում շարունակվելու դեպքում ՄՈՒՀ-ի սահմանած կարգով ի՞նչ անհրաժեշտ հանգամանք է քննարկվում:

Քննարկվում է ուսանողի կողմից համապատասխան կրեդիտների կուտակման անհրաժեշտությունը՝ հիմք ընդունելով տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքների փոփոխությունը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 16,)

Հարց 136

Որտեղի՞ց կարող է իրականացվել ուսանողի տեղափոխությունը պետական ՄՈՒՀ:

Միայն մեկ այլ պետական, հանրային և մասնավոր հավատարմագրված ՄՈՒՀ-ից:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 14, մաս 18)

Հարց 137

Որտե՞ղ կարող են իրականացվել մասնագիտական կրթության համապատասխան մակարդակի որակավորման կամ միկրոորակավորման (որոշակի ձեռք բերված ուսումնառության արդյունքների) կրթական ծրագիրը:

Քոլեջում, մասնագիտական կրթության մակարդակների որակավորումներով կրթական ծրագիր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատության ստորաբաժանումում, քրեակատարողական հիմնարկում, այլ կազմակերպությունում՝ լիցենզիայի առկայության դեպքում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 1)

Հարց 138

Ինչպե՞ս է կազմակերպվում մասնագիտական կրթությունը:

ՄՈՒՀ-ի և տվյալ որակավորումների ոլորտի սոցիալական գործընկերների հետ համատեղ մշակած ու ՄՈՒՀ-ի հաստատած ուսումնառության մոդուլների և ուսումնական պլանների ժամանակացույցին համապատասխան:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 6)

Հարց 139

Ինչպե՞ս է իրականացվում համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրով ուսումնառությունը, եթե այն կազմակերպվում է հիմնական կրթության հիմքով:

Տվյալ ծրագրում ընդգրկվում է միջնակարգ կրթության երրորդ մակարդակի առնվազն պետական բաղադրիչն ապահովող ծրագիրը (արդյունքները)՝ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան, որը սահմանվում է ուսումնական պլանով և դրա իրականացման ժամանակացույցով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 7)

Հարց 140

Նշվածներից ո՞րն է աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը կազմակերպելու ձևերից:

Դուալ ուսումնառություն՝ կրթական ծրագրի մակարդակում ըստ որակավորման առանձնահատկության ուսումնառության կազմակերպման ձև, որն իրականացվում է միաժամանակ ՄՈՒՀ-ում և գործատուի մոտ (այդ թվում՝ ուսումնագործնական կենտրոններում) կամ իրական աշխատավայրին համապատասխանեցված աշխատանքային միջավայրում ուսումնառության համադրմամբ՝ ապահովելով որակավորմանն ու զբաղմունքին համապատասխան աշխատանքային կարողունակությունների ձեռքբերումը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 9, կետ 1)

Հարց 141

Նշվածներից ո՞րն է աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը կազմակերպելու ձևերից:

Պրակտիկա՝ աշխատանքի վայրում ուսումնառության փուլ, որը լրացնում է հիմնական կրթական ծրագրի ճանաչողական և գործնական բաղադրիչը, և որի ընթացքում ուսանողն առավելապես դիտարկում է աշխատանքային գործընթացը, կատարում որոշակի աշխատանքներ՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 9, կետ 2)

Հարց 142

Նշվածներից ո՞րն է աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը կազմակերպելու ձևերից:

Աշխատանքի ընթացքում ուսումնառություն՝ կազմակերպվում է ընթացիկ աշխատանքային միջավայրում: Այն իրականացվում է առավելապես դրսեկության ձևով կրթության կազմակերպման միջոցով և ապահովում է աշխատանքային իրավահարաբերության մեջ գտնվող անձի միաժամանակյա կրթությունը և որակավորումը աշխատանքային գործունեության ընթացքում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 9, կետ 3)

Հարց 143

Ինչպե՞ս է կազմակեպվում ուսումնառությունը դուալ ուսումնառության պարագայում:

Աշխատանքային միջավայրում ուսումնառությունը կազմում է կրթական ծրագրի գերակշռող մասը, որի վերջնարդյունքներն ստուգվում են գործնական միջավայրում՝ գործատուների ներգրավմամբ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 10)

Հարց 144

Ո՞ր դեպքում կարող է մինչև 18 տարեկան աշկերտը ներգրավվել գործնական աշխատանքային ուսուցման մեջ, եթե կրթական ծրագրի որակավորման համապատասխան բնագավառում աշխատանքը օրենսդրությամբ սահմանված է որպես ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար կամ մինչև 18 տարեկան անձանց համար ծանր և վնասակար համարվող:

Եթե ապահովված են անչափահասի առողջության, անվտանգության և բարոյականության պահպանման համապատասխան պայմաններ և անհատական պաշտպանության միջոցներ, ինչպես նաև գործատուն նախապես տրամադրել է հնարավոր ռիսկերի, անվտանգ աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկություններ, անցկացրել է ուսուցում և հրահանգավորում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 14, նախադասություն 1)

Հարց 145

Ինչպես է գործատուն (այդ թվում՝ ՄՈՒՀ-ը, եթե գործատուն ՄՈՒՀ-ն է) վարձատրում դուալ ձևով ուսումնառող աշկերտին:

Տալիս է փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան վարձատրություն, իսկ այդ ժամանակահատվածը համարվում է մասնագիտական փորձառություն և հաշվարկվում աշխատանքային ստաժում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 15, նախադասություն 1)

Հարց 146

Ո՞ր նորմատիվ իրավական ակտի դրույթներն են տարածվում դուալ ուսումնառության ընթացքում աշխատանքային հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի դրույթները:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 15, նախադասություն 2)

Հարց 147

Ո՞վ է կրում է մասնագիտական կրթական ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված որոշակի աշխատանք կատարող ուսանողի՝ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից ապահովագրության պարտավորությունը:

ՄՈՒՀ-ը, եթե այլ բան նախատեսված չէ գործատուի հետ կնքված պայմանագրով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 16)

Հարց 148

Ո՞վ է հատուցում մասնագիտական կրթական ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող ուսանողի օրապահիկը, տեղափոխման և կեցության հետ կապված ծախսերը:

ՄՈՒՀ-ը, եթե այլ բան նախատեսված չէ գործատուի հետ կնքված պայմանագրով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 17, առաջին նախադաս.)

Հարց 149

Ո՞ր մարմինն է սահմանում մասնագիտական կրթական ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող ուսանողի օրապահիկը, տեղափոխման և կեցության հետ կապված հատուցման ենթակա ծախսերը և չափը:

Կառավարությունը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 17, երկրորդ նախադաս.)

Հարց 150

Կարո՞ղ է ՄՈՒՀ-ը ուսումնառության ընթացքում փոխել աշխատանքի վրա հիմնված ուսումնառության կազմակերպման ձևը:

Կարող է՝ լիազոր մարմնի սահմանած կարգով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 15, մաս 21)

Հարց 151

Ի՞նչ հիմքով է ՄՈՒՀ-ն ուսանողին շնորհում որակավորումը և կրթական աստիճանը հավաստող պաշտոնական փաստաթուղթ՝ դիպլոմ և դրա հավելված:

Մասնագիտական կրթության համապատասխան մակարդակի կրթական ծրագրի ավարտին պետական ամփոփիչ ստուգման դրական արդյունքի հիման վրա:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 16, մաս 1)

Հարց 152

Պետական ամփոփիչ ստուգման ժամանակ ուսանողի ո՞ր կարողունակություններն են գնահատվում:
Գործնական աշխատանքային իրավիճակում մասնագիտական խնդիրներ լուծելու և առաջադրանքներ կատարելու կարողունակությունը՝ համապատասխան որակավորման ուղղվածության համար սահմանված ուսումնառության վերջնարդյունքների շրջանակում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 16, մաս 2)

Հարց 153

Պետական ամփոփիչ ստուգումը չանցած ուսանողը ունի՞ վերահանձնելու իրավունք:

Չի զրկվում վերահանձնելու իրավունքից՝ օրենսդրությամբ և ՄՈՒՀ-ի հետ կնքված պայմանագրով սահմանված պայմաններով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 16, մաս 4)

Հարց 154

Պետական ամփոփիչ ստուգումն իրականացնող հանձնաժողովի կազմի որքանն է կազմում սոցիալական գործընկերության կողմ կազմակերպությունների ներկայացուցիչները:

Առնվազն մեկ երրորդը :

(ՄԿՈՒ օրենք, հոդված 16, մաս 5)

Հարց 155

Ի՞նչ լրացուցիչ փաստաթուղթ է շնորհվում կրթական ծրագրի համապատասխան մակարդակի որակավորման ուսումնառությունը աշխատանքի վրա հիմնված դուալ ուսումնառության ձևով ավարտած ուսանողին:

Շնորհվում են նաև ձեռք բերված և ոլորտային հանձնաժողովի գնահատած ու ճանաչած աշխատանքային կարողունակությունների վերաբերյալ հավաստագիր և ներդիր՝ «Կրթության մասին» օրենքի 26.1-ին հոդվածով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 16, մաս 7)

Հարց 156

Թվարկվածներից նշեք ՄԿՈՒ ավարտական երկու փաստաթուղթ:

- Արհեստագործական կրթության դեպքում՝ «արհեստավոր» կամ «կրտսեր մասնագետ» որակավորման դիպլոմը և դրա հավելվածը.
- մասնագիտական ուսուցման կամ մասնակի որակավորման (միկրոորակավորման) վկայականն ու ներդիրը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 16, մաս 8, կետ 1,3)

Հարց 157

Թվարկվածներից նշեք ՄԿՈՒ ավարտական երկու փաստաթուղթ:

- Միջին մասնագիտական կրթության դեպքում՝ «մասնագետ» որակավորման դիպլոմը և դրա հավելվածը.
- աշխատանքի վրա հիմնված ուսումնառության դեպքում՝ նաև գնահատված և ճանաչված կարողունակությունների հավաստագիրն ու ներդիրը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 16, մաս 8, կետ 2,4)

Հարց 158

Ի՞նչ փաստաթուղթ է տրվում ուսումնառությունը չավարտած անձին:

Տրվում է ուսումնասիրած դասընթացների ու մոդուլների և կուտակած կրեդիտների վերաբերյալ ակադեմիական տեղեկանք:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 16, մաս 9)

Հարց 159

Ի՞նչ փաստաթուղթ կարող է տրվել համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի համար սահմանված ամբողջական ծրագիրը չհաղթահարած ուսանողին:

Ուսանողի դիմումի հիման վրա նրան կարող է տրվել նաև մասնագիտական ուսուցման կամ մասնակի որակավորման (միկրոորակավորման) վկայական՝ համաձայն ձեռք բերած ուսումնառության արդյունքների:

ՄԿՈՒ օրենք, հոդված 16, մաս 10)

Հարց 160

Թվարկածներից նշեք ՄԿՈՒ բնագավառում կառավարության երկու իրավասություն:

- Հիմնադրում, վերակազմակերպում և լուծարում է պետական ՄՈՒՀ-եր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով որոշում է պետության մասնակցությամբ հանրային ՄՈՒՀ-ի ստեղծման, վերակազմակերպման, մասնակցությունից դուրս գալու և գործունեության դադարեցման հարցերը.
- հաստատում է մասնագիտական կրթության համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի իրականացման իրավունքի և որակավորման լիցենզավորման կարգն ու պայմանները:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 18, մաս 1, կետ 1,3)

Հարց 161

Թվարկածներից նշեք ՄԿՈՒ բնագավառում կառավարության երկու իրավասություն:

- Հաստատում է պետական ՄՈՒՀ-ի տնօրենի մրցութային ընտրության կարգը.
- հաստատում է ՄՈՒՀ-ի ատեստավորված կամ տարակարգ ստացած մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխության և հավելավճարի սահմանման կարգը և չափը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 18, մաս 1, կետ 6,7)

Հարց 162

Թվարկածներից նշեք ՄԿՈՒ բնագավառում կառավարության երկու իրավասություն:

- Հաստատում է պետական և հանրային ՄՈՒՀ-երի՝ պետական բյուջեից ֆինանսավորման կարգը, գործակիցները և նորմատիվները, այդ թվում՝ ըստ ՄՈՒՀ-ի ֆինանսավորման արդյունքային ցուցանիշների.

- հաստատում է պետական և հանրային ՄՈՒՀ-երի՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա կրթաթոշակով (լրիվ կամ մասնակի) ընդունելության տեղերի ձևավորման և ըստ ՄՈՒՀ-երի հատկացնելու կարգը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 18, մաս 1, կետ 8,10)

Հարց 163

Թվարկածներից նշեք ՄԿՈՒ բնագավառում կառավարության երկու իրավասություն:

- Սահմանում է պետության կողմից լրիվ կամ մասնակի կրթաթոշակ տրամադրվելու կարգը, այդ թվում՝ չափանիշները, հիմքերը, դեպքերը և կրթաթոշակի չափերը.
- հաստատում է պետական և հանրային ՄՈՒՀ-երի՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա լրիվ կամ մասնակի կրթաթոշակի ձևով ընդունելության տեղերը՝ ըստ որակավորումների (ուղղվածության):

(ՄԿՈՒ օրենք, հոդված 18, մաս 1, կետ 9,11)

Հարց 164

Թվարկածներից նշեք ՄԿՈՒ բնագավառում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի երկու իրավասություն.

- Հաստատում է ոլորտային որակավորման շրջանակի մասնագիտական կրթության յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագիրը.
- սահմանում է համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի կազմակերպման նախահաշվի կազմման չափանիշները:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 19, մաս 1, կետ 1,11)

Հարց 165

Թվարկածներից նշեք ՄԿՈՒ բնագավառում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի երկու իրավասություն:

- Սահմանում է աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ձևերի իրականացման կարգն ու մեթոդաբանությունը.
- սահմանում է հիմնական կրթության հիմքով մասնագիտական կրթական ծրագրերում միջնակարգ կրթության երրորդ մակարդակի պետական բաղադրիչով սահմանված առարկաների նվազագույն ցանկն ու ծավալը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 19, մաս 1, կետ 3, 24)

Հարց 166

Թվարկածներից նշեք ՄԿՈՒ բնագավառում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի երկու իրավասություն:

- Սահմանում է ՄՈՒՀ-ի մանկավարժական և վարչական պաշտոններին ներկայացվող հիմնական չափանիշները.
- սահմանում է մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման կարգը, տարակարգի շնորհման հանձնաժողովի ձևավորման, դրա գործունեության և տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, տարակարգի բնութագրիչները:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 19, մաս 1, կետ 17, 21)

Հարց 167

Ո՞ր մարմնի իրավասությունն է կազմակերպել ՄԿՈՒ արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ ներառականությանն ուղղված ուսումնամեթոդական գրականության և օժանդակ նյութերի, կրթության մատչելիության ապահովման վերաբերյալ ուղեցույցների մշակումը և համակարգել ՄՈՒՀ-երին մեթոդաբանական աջակցության տրամադրումը:

Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի.

(ՄԿՈՒ օրենք, հոդված 19, մաս 1, կետ 30)

Հարց 168

Ո՞ր մարմնի լիազորությունն է մասնագիտական կրթության մասով՝ ոլորտային որակավորումների շրջանակի, որակավորումների ցանկերի և բնութագրերի, որակավորման շրջանակային նկարագրի, ուսանողների գիտելիքների, կարողությունակությունների նկատմամբ պահանջների ձևավորում:

Դուալ ուսումնառությունը համակարգող պատասխանատու մարմինը

(ՄԿՈՒ օրենք, հոդված 20, մաս 1, կետ 2)

Հարց 169

Ո՞ր մարմինն է սահմանում գործատուների՝ որպես աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ձևով կրթական ծրագրի իրականացնող կողմ հանդես գալու նվազագույն պահանջները և ընթացակարգը:

Դուալ ուսումնառությունը համակարգող պատասխանատու մարմինը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 20, մաս 4, կետ 1)

Հարց 170

Ո՞ր մարմինն է կազմակերպում և իրականացնում դուալ ուսումնառության ձևով համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրով սահմանված ուսումնառության վերջնարդյունքների ստուգումը և ճանաչումը:

Դուալ ուսումնառությունը համակարգելու շրջանակներում ոլորտային կառույցը՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի, ՄՈՒՀ-ի և գործատուների ներգրավմամբ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 20, մաս 5, կետ 7)

Հարց 171

Ո՞ր մարմիններն են իրականացնում պետական ՄՈՒՀ-ի կառավարումը:

Հիմնադիրը, լիազոր մարմինը, ՄՈՒՀ-ի կոլեգիալ կառավարման մարմինը՝ կառավարման խորհուրդ կամ հոգաբարձուների խորհուրդ և ՄՈՒՀ-ի գործադիր մարմինը՝ տնօրենը, պետը, ռեկտորը, ծրագրի կամ ստորաբաժանման ղեկավարը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 21, մաս 1)

Հարց 181

Ինչպե՞ս է գործում պետական ՄՈՒՀ-ի խորհուրդը:

Մշտապես գործող մարմին է, որի անդամի լիազորությունների ժամկետը հինգ տարի է:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 22, մաս 1)

Հարց 182

Քանի անդամից է բաղկացած պետական ՄՈՒՀ-ի խորհուրդը:

Յոթ անդամից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 22, մաս 2)

Հարց 183

Նշվածներից որը պետական ՄՈՒՀ-ի խորհուրդը ձևավորման համամասնության մաս չի:

Երկուսին առաջադրում կրթության պետական կառավարման լիազոր մարմին ղեկավարը՝ ոլորտը սպասարկող գերատեսչության ներկայացուցիչներից կամ գերակա ոլորտների հեղինակավոր անձնաձից:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 22, մաս 4)

Հարց 184

Ո՞ր մարմինն է սահմանում պետական ՄՈՒՀ-ի խորհրդի ձևավորման կարգը, խորհրդի անդամին ներկայացվող նվազագույն պահանջները, առաջադրման, փոխարինման և լիազորությունների դադարեցման կարգը:

Կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 22, մաս 9)

Հարց 185

Ինչպե՞ս է կատարվում պետական ՄՈՒՀ-ի խորհրդի անդամի թափուր տեղի համար համալրումը:

Կատարվում է նախկին անդամի համար սահմանված կարգով՝ ոչ ուշ, քան խորհրդի անդամի լիազորությունների դադարման կամ դադարեցման մասին խորհրդի նախագահի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 22, մաս 12)

Հարց 186

Ո՞ր դեպքում է պետական ՄՈՒՀ-ի խորհրդի նիստն իրավազոր:

Եթե դրան մասնակցում է առնվազն չորս անդամ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 22, մաս 14)

Հարց 187

Ո՞վ չի կարող ընտրվել պետական ՄՈՒՀ-ի խորհրդի նախագահ:

ՄՈՒՀ-ի ուսանողը կամ մանկավարժական աշխատողը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 23, մաս 2)

Հարց 188

Ի՞նչ ժամկետներում է լուծվում պետական ՄՈՒՀ-ի խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու հարցը:

Հիամապատասխան հանգամանքները հայտնի դառնալու օրվանից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, խորհրդի նախագահը հրավիրում է խորհրդի նիստ, իսկ նիստ չհրավիրվելու դեպքում այն հրավիրվում է խորհրդի առնվազն երեք անդամի կողմից:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 24, մաս 3)

Հարց 189

Թվարկվածներից նշեք պետական ՄՈՒՀ-ի խորհրդի երկու լիազորություն:

- ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ չարգելված ձեռնարկատիրական գործունեության տեսակների շրջանակում հաստատում է ՄՈՒՀ-ի ձեռնարկատիրական գործունեության առանձին տեսակները, սահմանում դրանց նկարագիրը, պայմանագրի էական պայմանները, սահմանում է շահույթի օգտագործման նպատակային ուղղությունները.
- հաստատում է տնօրենի ներկայացրած որակավորման մոդուլային ծրագիրն ու ուսումնական պլանը, այդ թվում՝ աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ծրագիրը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 25, մաս 1, կետ 11, 16)

Հարց 190

Ո՞վ է ղեկավարում ՄՈՒՀ-ի ընթացիկ գործունեությունը.

Տնօրենը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 26, մաս 1)

Հարց 191

Ինչպե՞ս և ի՞նչ ժամկետով է ընտրվում պետական ՄՈՒՀ-ի տնօրենը.

- մրցութային հիմունքներով՝ հինգ տարի ժամկետով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 26, մաս 3)

Հարց 192

Ի՞նչ պարտավորություն ունի ՄՈՒՀ-ի տնօրենն իր պաշտոնավարման ընթացքում:

Պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն, իր պաշտոնեական դիրքը կամ աշխատանքային միջոցները չօգտագործել կուսակցությունների կամ հասարակական, այդ թվում՝

կրոնական միավորումների շահերի համար կամ նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու կամ իր պաշտոնական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու համար:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 26, մաս 7)

Հարց 193

Ո՞վ կարող է դիմել ՄՈՒՀ-ի ղեկավարման իրավունքի հավաստագիր ստանալու համար.

Այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի առնվազն հինգ կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն երեք կամ կառավարման ոլորտի առնվազն հինգ կամ մասնագիտական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 27, մաս 1)

Հարց 194

Հավաստագրման քննությունը հանձնած անձին ի՞նչ ժամկետով է շնորհվում հավաստագիր:

Հինգ տարի ժամկետով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 27, մաս 8)

Հարց 195

Հավաստագիր ստացած անձը ի՞նչ ժամկետում կարող է ընտրվել կամ նշանակվել ՄՈՒՀ-ի տնօրենի կամ ստորաբանաժանման ղեկավարի պաշտոնում:

Հավաստագիրն ստանալու օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում կարող է մասնակցել պետական ՄՈՒՀ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին, իսկ հանրային և մասնավոր ՄՈՒՀ-երի կամ կազմակերպության մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման դեպքում ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակվել պաշտոնում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 27, մաս 11)

Հարց 196

ՄՈՒՀ-ի տնօրենի թափուր պաշտոն առաջանալու դեպքում մինչև ՄԿՈՒ օրենքով և ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունը ինչպե՞ս է կարգավորվում ՄՈՒՀ-ի ղեկավարման հարցը:

Լիազոր մարմնի ղեկավարը տնօրենի տեղակալներից մեկին նշանակում է տնօրենի պարտականությունների ժամանակավոր կատարող՝ սահմանելով տնօրենի վարձատրության հետ տարբերության չափով լրացուցիչ վարձատրություն:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 28, մաս 2)

Հարց 197

Ի՞նչ ժամկետում է ՄՈՒՀ-ի նոր տնօրենը ստանձնում իր պաշտոնը:

ՄՈՒՀ-ի գործող տնօրենի լիազորությունների ժամկետի ավարտի կամ մեկ այլ հիմքով տնօրենի պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ նշանակման օրվանից:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 28, մաս 3)

Հարց 198

Ո՞ր դեպքերում կարող են ՄՈՒՀ-ի տնօրենի թափուր տեղի համար մրցույթի արդյունքները անվավեր ճանաչվել:

Լիազոր մարմնի որոշմամբ, եթե հաստատվել են դիտորդի բացասական եզրակացությունը, հավակնորդի կամ խորհրդի անդամի բողոքում ներկայացված՝ մրցույթի անցկացման կարգի խախտումը, կամ դատական կարգով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 28, մաս 9)

Հարց 199

Նշվածներից ո՞րն է ՄՈՒՀ-ի տնօրենի լիազորություններից:

Կազմակերպում է կրթական ծրագրի համապատասխան մակարդակի ու որակավորման վերջնարդյունքներն ապահովող կրթության և ուսուցման գործընթացը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 29, մաս 1, կետ 1)

Հարց 200

Ի՞նչ ժամկետում և ծրագրով են պետական և հանրային ՄՈՒՀ-երի տնօրենները անցնում պարտադիր վերապատրաստում:

Առնվազն երեք տարին մեկ, պետական բյուջեի միջոցների հաշվին՝ լիազոր մարմնի գնահատած կարիքներին համապատասխան սահմանված ծրագրով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 29, մաս 2)

Հարց 201

Ի՞նչ ժամկետով է պաշտոնավարում պետական ՄՈՒՀ-ի տնօրենը:

Մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը՝ անկախ հավաստագրի հնգամյա ժամկետը լրանալուց:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 29, մաս 3, առաջին հատված)

Հարց 202

Ի՞նչ ժամկետով է պաշտոնավարում հանրային և մասնավոր ՄՈՒՀ-երի տնօրենները կամ կազմակերպության մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը:

Մինչև հավաստագրի ժամկետը լրանալը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 29, մաս 3, երկրորդ հատված)

Հարց 203

Նշվածներից ո՞ր դեպքում է պետական ՄՈՒՀ-ի տնօրենի լիազորությունները դադարեցվում լիազոր մարմնի պատճառաբանված որոշման հիման վրա:

Իր գործառույթներն իրականացնելիս ՄՈՒՀ-ին նրա մեղքով հասցվել է վնաս, որի գումարը գերազանցում է ՄՈՒՀ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի մեկ տոկոսը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 29, մաս 6, կետ 3)

Հարց 204

Նշվածներից ո՞ր դեպքում է պետական ՄՈՒՀ-ի տնօրենի լիազորությունները դադարեցվում լիազոր մարմնի պատճառաբանված որոշման հիման վրա:

Ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ կամ վերջին ութ ամսվա ընթացքում ավելի քան 120 օր՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի օրերը, չի ներկայացել աշխատանքի:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 29, մաս 6, կետ 5)

Հարց 205

Նշվածներից ո՞ր դեպքում է պետական ՄՈՒՀ-ի տնօրենի լիազորությունները դադարեցվում լիազոր մարմնի պատճառաբանված որոշման հիման վրա:

Նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառով չի ներկայացել աշխատանքի:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 29, մաս 6, կետ 6)

Հարց 206

Նշվածներից ո՞ր դեպքում պետական ՄՈՒՀ-ի խորհուրդը ՄԿՈՒ օրենքով և ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է քննարկել տնօրենի հետագա պաշտոնավարման հարցը և տնօրենի լիազորությունների դադարեցման հարցով դիմել լիազոր մարմին:

ՄՈՒՀ-ի գործունեության տարեկան ծրագրի կամ զարգացման ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվությունը խորհուրդը երկու անգամ անընդմեջ չի ընդունել:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 29, մաս 11, կետ 1)

Հարց 207

Նշվածներից ո՞ր դեպքում պետական ՄՈՒՀ-ի խորհուրդը ՄԿՈՒ օրենքով և ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է քննարկել տնօրենի հետագա պաշտոնավարման հարցը և տնօրենի լիազորությունների դադարեցման հարցով դիմել լիազոր մարմին:

ՄՈՒՀ-ի ներքին և արտաքին գնահատման արդյունքների հիման վրա տնօրենի գործունեությունը խորհուրդը ճանաչել է անբավարար:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 29, մաս 11, կետ 2)

Հարց 208

Նշվածներից ո՞ր դեպքում պետական ՄՈՒՀ-ի խորհուրդը ՄԿՈՒ օրենքով և ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է քննարկել տնօրենի հետագա պաշտոնավարման հարցը և տնօրենի լիազորությունների դադարեցման հարցով դիմել լիազոր մարմին:

Պաշտոնավարման ընթացքում թույլ է տվել ուսումնադաստիարակչական գործառույթների հետ անհամատեղելի արարք:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 29, մաս 11, կետ 3)

Հարց 209

Թվարկվածներից նշեք ՄՈՒՀ-ի ուսանողի իրավունքներից երկուսը:

- Ընտրելու կրթական ծրագրի մակարդակը, որակավորումը, դրա ուղղվածությունը, ցանկացած կրթական մակարդակում դադարեցնելու կամ վերականգնելու ուսումնառությունը՝ անկախ դրա դադարեցման ժամկետից.
- ներկայացնելու առաջարկներ իր որակավորման կրթական ծրագրի բովանդակության և ուսումնառության կազմակերպման ձևի բարելավման վերաբերյալ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 1, կետ 1,3)

Հարց 210

ՄԿՈՒ կրթության մասնակիցներից ու՞մ իրավունքն է:

Նախաձեռնել և ստեղծել ուսանողական կառույցներ, միավորումներ՝ ուսանողական ինքնակառավարման մարմիններ, ընդգրկվել և անդամակցել դրանց ու հանդես գալու ուսանողական նախաձեռնություններով, ծրագրերով, սոցիալական կամավորական միջոցառումներով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 1, կետ 7)

Հարց 211

Ի՞նչ իրավունք ունի ՄՈՒՀ-ի ուսանողը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու դեպքում:

Իրավունք ունի ընդհանուր հիմունքներով կրթություն ստանալու և օգտվելու խելամիտ հարմարեցումներից առանց հավելյալ վճարների:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 1, կետ 8)

Հարց 212

Թվարկվածներից նշեք ուսանողի երկու պարտավորություն:

- Կատարել ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները.
- մասնակցել համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի ուսումնառությանը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 2, կետ 1,2)

Հարց 213

Ինչպե՞ս են ուսանողական ինքնակառավարման մարմինները գործում ՄՈՒՀ-ում և դրա համապատասխան կառուցվածքային միավորներում:

Գործում են որպես ուսանողական ներկայացուցչական մարմիններ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 3)

Հարց 214

Նշվածներից ո՞ր դեպքում է կիրառվում ուսանողի ուսումնառության դադարեցումը ընդհատման միջոցով:

Փոխանակման և համագործակցային ծրագրերում միջանկյալ ուսումնառության դեպքում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 4, կետ 6)

Հարց 215

Նշվածներից ո՞ր դեպքում է կիրառվում ուսանողի ուսումնառության դադարեցումը ընդհատման միջոցով:

Հղիության և ծննդաբերության դեպքում.

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 4, կետ 1)

Հարց 216

Նշվածներից ո՞ր դեպքում է կիրառվում ուսանողի ուսումնառության դադարեցումը ազատման միջոցով:

Ուսանողի դիմումի համաձայն:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 5, կետ 1)

Հարց 217

Նշվածներից ո՞ր դեպքում է կիրառվում ուսանողի ուսումնառության դադարեցումը ազատման միջոցով:

Այլ հաստատություն տեղափոխվելու դեպքում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 5, կետ 2)

Հարց 218

Նշվածներից ո՞ր դեպքում է կիրառվում ուսանողի ուսումնառության դադարեցումը հեռացման միջոցով:

ՄՈՒՀ-ի ներքին կարգապահական կանոններով կամ ՄՈՒՀ-ի և ուսանողի միջև կնքված ուսումնառության պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, այդ թվում՝ ՄՈՒՀ-ի սահմանած ժամկետում ուսման վարձավճարը չվճարելու դեպքում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 6, կետ 1)

Հարց 219

Նշվածներից ո՞ր դեպքում է կիրառվում ուսանողի ուսումնառության դադարեցումը հեռացման միջոցով:

Ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման անբավարար մակարդակի դեպքում՝ անկախ ուսումնառության հիմքից, եթե ՄՈՒՀ-ի սահմանած կարգով և ժամկետում չի լրացրել դրանք:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 6, կետ 2)

Հարց 220

Ի՞նչ պատասխանատվության միջոց կարող է կիրառվել ուսանողի նկատմամբ՝ ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում:

Կարող են կիրառվել կարգապահական տույժեր, այդ թվում՝ ՄՈՒՀ-ից հեռացում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 7, նախադաս.1)

Հարց 221

Ի՞նչ սահմանափակում է նախատեսված ուսանողի նկատմամբ կիրառվող կարգապահական միջոցների համար:

Չեն կարող կիրառվել հավելյալ դրամական վճարի ձևով կարգապահական միջոցներ, բացառությամբ պատճառված վնասի հատուցման դեպքերի:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 7, նախադաս.2)

Հարց 222

Ակադեմիական արձակուրդից վերադարձած ուսանողի կարգավիճակը վերականգնելիս, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում ե՞րբ է պահպանվում ՄՈՒՀ ընդունվելու պահին սահմանված ուսման վարձի չափը է (բացառությամբ տվյալ ուսումնական տարում ուսման վարձի նվազման դեպքի):

Եթե ուսանողն իր կարգավիճակը վերականգնելու վերաբերյալ դիմումը ներկայացրել է լիազոր մարմնի սահմանած ժամկետում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 9)

Հարց 223

Ի՞նչ ակադեմիական միջոցառումների կարող է մասնակցել (ընդգրկվել) ուսանողը:

Մասնագիտական ոլորտի կամ համապետական նշանակության միջոցառումներին, իր ուսումնառած ծրագրին առնչվող կրթական ծրագրերին, մրցույթներին, փառատոներին և այլ ակադեմիական միջոցառումներին՝ համաձայն լիազոր մարմնի սահմանած կարգի:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 10, նախադաս.1)

Հարց 224

Ինչպե՞ս է լրացվում ուսանողի կրթական ծրագրի բաց թողնված արդյունքները՝ ակադեմիական միջոցառումներին մասնակցելու դեպքում:

Լրացվում են ՄՈՒՀ-ի աջակցությամբ՝ առանց լրացուցիչ վճարման պայմանի:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 30, մաս 10, նախադաս.2)

Հարց 225

Ինչպե՞ս են ՄՈՒՀ-ում ստեղծվում ուսանողական ինքնակառավարման մարմիններ:

Ուսանողների նախաձեռնությամբ ՄՈՒՀ-ում կարող են ստեղծվել ուսանողական տարբեր կառույցներ և միավորումներ, որոնց ստեղծման և գործունեության կարգը սահմանում է ՄՈՒՀ-ի խորհուրդը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 31, մաս 1)

Հարց 226

Ո՞ր մարմինն է սահմանում ուսանողական ինքնակառավարման մարմիններին հատկացվող ընդհանուր ֆինանսավորման չափը, գույքի և այլ ռեսուրսների (այդ թվում՝ հավելյալ) տրամադրման դեպքերը, նվազագույն չափը, դրանց օգտագործման պայմանները և հաշվետվողականության կարգը:

Սահմանում է ՄՈՒՀ-ի խորհուրդը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 31, մաս 6)

Հարց 227

Կրթական ծառայություն մատուցելու համար ո՞ր կառույցները կարող են սահմանել կրթական ծրագրի յուրաքանչյուր որակավորման մակարդակի որակավորման (ուղղվածության) ուսման վարձը և որոշել դրա չափը:

ՄՈՒՀ-երը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 32, մաս 1, նախ.1)

Հարց 228

Ի՞նչ չափով է սահմանվում ուսանողի կարգավիճակը վերականգնած ուսանողի ուսման վարձի չափը:

Սահմանվում է տվյալ ուսումնական տարվա համար սահմանված չափով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, և ուսանողի հետ կնքվում է նոր պայմանագիր:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 32, մաս 2)

Հարց 229

Նշվածներից ովքե՞ր չեն կարող ստանալ ֆինանավորում պետական բյուջից:

Այն անձինքը, ովքեր զուգահեռ ուսումնառում են այլ կրթական ծրագրի մակարդակով կամ որակավորմամբ, եթե նրանք այդ կրթական ծրագրի կրեդիտների կեսից ավելին ձեռք են բերել պետական բյուջեի միջոցներով, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 32, մաս 5, մաս 1)

Հարց 230

Նշվածներից ովքե՞ր չեն կարող ստանալ ֆինանավորում պետական բյուջից:

Միաժամանակ ուսումնառում են նույն կրթական մակարդակի երկու որակավորման կրթական ծրագրով և դրանցից մեկի ուսումնառության համար պետական բյուջեի միջոցներից ստանում են ֆինանսավորում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 32, մաս 5, մաս 2)

Հարց 231

Ո՞ր դեպքում է արգելվում ծառայությունների մատուցման համար գանձել հավելյալ վճարներ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսումնառությունը կազմակերպելու նպատակով անհրաժեշտ ծառայությունների մատուցման համար:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 32, մաս 6)

Հարց 232

Ի՞նչ է հաշվի առնում ՄՈՒՀ-ը վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսին, իր միջոցների հաշվին ամբողջությամբ կամ մասնակի ուսման վարձը փոխհատուցել համար:

Ուսանողի սոցիալական վիճակը և բարձր առաջադիմության արդյունքները, լիազոր մարմնի սահմանած կարգով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 32, մաս 8)

Հարց 233

Ի՞նչ նպատակով և ինչպե՞ս է ուսանողը անցնում բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն:

Ուսանողների առողջության պահպանման նպատակով, յուրաքանչյուր ուսանող տարին առնվազն մեկ անգամ՝ ՄՈՒՀ-ի բժշկական սպասարկման ծառայությունում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպությունում պետական բյուջեի միջոցների հաշվին:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 33, մաս 2)

Հարց 234

Ո՞ր պայմաններին համապատասխանելու դեպքում անձը կարող է լինել ՄՈՒՀ-ի դասախոս:

Ունի դասավանդվող մոդուլային ծրագրի համար հիմնարար համարվող որակավորմամբ բարձրագույն կրթություն կամ առնվազն միջին մասնագիտական կրթություն և համապատասխան բնագավառում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 1, կետ 1)

Հարց 235

Բարձրագույն կրթություն կամ առնվազն միջին մասնագիտական կրթություն և դասավանդվող մոդուլային ծրագրի համար հիմնարար համարվող որակավորմամբ երաշխավորված լրացուցիչ կրթական ծրագրերով մասնագիտական ուսուցման վկայական և համապատասխան բնագավառում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում անձը ՄՈՒՀ-ում ի՞նչ աշխատող կարող է լինել:

ՄՈՒՀ-ի դասախոս:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 1, կետ 2)

Հարց 236

Ո՞ր պայմաններին համապատասխանելու դեպքում անձը կարող է լինել ՄՈՒՀ-ի վարպետ:

Ունի առնվազն մասնագիտական կրթություն կամ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ զբաղմունքի բնագավառում գործունեության առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 1, կետ 3)

Հարց 237

Ո՞ր դեպքում է անձի բարձրագույն կրթության կամ առնվազն միջին մասնագիտական կրթության որակավորումը դասավանդվող մոդուլային ծրագրի համար համարվում հիմնարար:

Եթե կազմում է դասավանդվող մոդուլային ծրագրի բովանդակության առնվազն 30 տոկոսը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 2)

Հարց 238

Ինչպե՞ս է համալրվում պետական ՄՈՒՀ-ի դասախոսի կամ վարպետի թափուր տեղերը:

Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած մրցութային կարգով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 3, նախադաս.1)

Հարց 239

Ո՞րն է համարվում ՄՈՒՀ-ի դասախոսի կամ վարպետի թափուր տեղ:

Տվյալ որակավորման ուղղվածության ուսումնական պլանով սահմանված առարկան կամ մոդուլը դասավանդող դասախոսի կամ վարպետի չզբաղեցրած պաշտոնը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 3, նախադաս.2)

Հարց 240

Ո՞ր դեպքում ՄՈՒՀ-ի դասախոսի կամ վարպետի թափուր տեղ համար մրցույթ կարող է չհայտարարվել:

Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած դեպքերում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 3, նախադաս.3)

Հարց 241

Ի՞նչ նորմատիվ իրավական ակտերով են սահմանվում ՄՈՒՀ-ի աշխատողների ընտրության, նշանակման, առաջխաղացման և վերանշանակման չափանիշներն ու պայմանները, իրավունքներն ու պարտականությունները:

Սահմանվում են սույն օրենքով, ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 4)

Հարց 242

Թվարկված մանկավարժականա աշխատողների պաշտոններում որը չի ընդգրկված աստիճանակարգությունում:

Դասախոսի օգնական:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 5)

Հարց 243

Ինչ հանգամանքներից ելնելով ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ կարող են սահմանվել ուսումնաօժանդակ, արտադրական կազմի և այլ պաշտոններ:

Մշակույթի, սպորտի և այլ ոլորտներում ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի մակարդակի և որակավորումների ուսումնառության կազմակերպման առանձնահատկություններից ելնելով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 7)

Հարց 244

Կարո՞ղ են վարչական պաշտոն զբաղեցնող կամ կառավարման գործառույթներ իրականացնող և համապատասխան որակավորում ունեցող անձինք իրականացնել նաև մանկավարժական գործունեություն:

Կարող են նույն ՄՈՒՀ-ում ոչ ավելի, քան շաբաթական ութ ակադեմիական ժամ բեռնվածությամբ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 8)

Հարց 245

Ի՞նչ սահմանափակում է սահմանված ՄՈՒՀ-ի վարչական պաշտոն զբաղեցնող անձի համար:

Չի կարող զբաղեցնել վարչական կամ կառավարման գործառույթներ իրականացնող այլ պաշտոն:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 9)

Հարց 246

Ի՞նչ գործունեություն է համարվում ՄՈՒՀ-ի կրթական կառուցվածքային միավորի ղեկավարի (ամբիոնի վարիչի, ոլորտային հոսքի ղեկավարի և այլն) գործունեությունը:

Համարվում է մանկավարժական:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 10)

Հարց 247

Ո՞ր մարմինն է սահմանում պետական ՄՈՒՀ-ի ուսումնաօժանդակ, մանկավարժական և վարչական պաշտոններին ներկայացվող մասնագիտական չափանիշները:

Սահմանում է լիազոր մարմինը՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի, կրթության մակարդակի և մասնագիտական ոլորտների կրթական ծրագրերի առանձնահատկությունները:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 11)

Հարց 248

Նշվածներից ո՞րն է ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողի իրավունքներից:

Կազմակերպելու և իրականացնելու մասնագիտական ուսուցման և կատարելագործման, ինչպես նաև սոցիալական, կամավորական, ձեռներեցության ծրագրեր:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 12, կետ 6)

Հարց 249

Նշվածներից ո՞րն է ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողը պարտավորություններից:

Նպաստել անձի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս 13, կետ 3)

Հարց 250

Ինչպե՞ս է սահմանվում յուրաքանչյուր մոդուլը կազմակերպող դասախոսի կամ վարպետի պաշտոնի նկարագիրը:

Սահմանում է ՄՈՒՀ-ը՝ օրենքով սահմանված մանկավարժական պաշտոնների մասնագիտական չափանիշների հիման վրա:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 1)

Հարց 251

Ի՞նչ նպատակով և ժամկետներում է իրականացվում ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողների ատեստավորումը:

Զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով երեք տարին մեկ հիմնական աշխատող հանդիսացող դասախոսի կամ վարպետի, իսկ համատեղությամբ աշխատող մանկավարժական աշխատողների և հրահանգիչների դեպքում՝ վերջիններիս ցանկությամբ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 3)

Հարց 252

Ի՞նչ ընթացակարգով կարող է ատեստավորվել և տարակարգ ստանալ միջնակարգ կրթության երրորդ մակարդակին համապատասխան առարկայական ծրագիր վարող դասախոսը:

«Հանրակրթության մասին» օրենքով սահմանված՝ ուսուցչի վերապատրաստման, ատեստավորման և տարակարգի շնորհման ընթացակարգով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 6)

Հարց 253

Ինչպե՞ս է կազմակերպվում ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողի վերապատրաստումը:

Օրենքով և Կառավարության սահմանած լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման ընթացակարգերին համապատասխան՝ մոդուլային ուսուցման ծրագրով, որով տրվում են պետական նմուշի վկայական և ձեռք բերված ուսումնառության արդյունքների վերաբերյալ ներդիր:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 8)

Հարց 254

Ո՞ր մարմինն է սահմանում ատեստավորման համար մանկավարժական աշխատողի կողմից հավաքվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, մասնագիտական չափանիշները:

Կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 9)

Հարց 255

Ի՞նչ որոշում է կայացնում Ատեստավորման հանձնաժողովը մանկավարժական աշխատողի ատեստավորման արդյունքով.

Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ չի համապատասխանում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 10)

Հարց 256

Ո՞ր դեպքում է լուծվում մանկավարժական աշխատողի հետ տվյալ պաշտոնի համար կնքված աշխատանքային պայմանագիրը:

Ատեստավորման հանձնաժողովի՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշման հիման վրա:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 10, նախադաս. 2)

Հարց 257

Սահմանափակվո՞ւմ է արդյո՞ք անձի մանկավարժական գործունեությամբ զբավելու իրավունքը՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու և զբաղեցրած պաշտոնից ազատվելու դեպքում:

Չի սահմանափակվում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 12)

Հարց 258

Ո՞ր դեպքում է դադարեցվում ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողի տարակարգի համար տրվող հավելավճարը:

Եթե տվյալ մանկավարժական աշխատողը ատեստավորումից հետո զբաղեցրած պաշտոնին չի համապատասխանել:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 15)

Հարց 259

Ի՞նչ ժամկետում է ատեստավորման ենթական, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվող մանկավարժական աշխատողը ենթակա է ատեստավորման:

Աշխատանքի ներկայանալուց հետո՝ չորսամսյա ժամկետում:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 18)

Հարց 260

Ո՞վ կարող է մասնակցել դասախոսի, վարպետի կամ հրահանգչի տարակարգի շնորհման և բարձրացման գործընթացին:

Ատեստավորված ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողն իր նախաձեռնությամբ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 19)

Հարց 261

Ի՞նչ աստիճանակարգություն ունի մանկավարժական աշխատողի տարակարգը:

Եռաստիճան է:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 20)

Հարց 262

Ինչի՞ համար է հիմք հանդիանում ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողի տարակարգի շնորհման հանձնաժողովի որոշումը:

Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից մանկավարժական աշխատողին որակավորման համապատասխան տարակարգի շնորհման և հավելավճարի սահմանման համար:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 25, նախադաս.1)

Հարց 263

Ի՞նչ ժամկետով է շնորհվում տարակարգ:

Երեք տարի ժամկետով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 25, նախադաս.2)

Հարց 264

Տարակարգ ստացած ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողին ինչպե՞ս է տրվում է համապատասխան հավելավճար:

ՄՈՒՀ-ին հատկացված միջոցների հաշվին՝ Կառավարության սահմանած չափով և կարգով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 26)

Հարց 265

Ո՞ր դեպքում է դադարեցվում ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողի տարակարգի համար տրվող հավելավճարը:

Եթե տվյալ մանկավարժական աշխատողը ատեստավորումից հետո զբաղեցրած պաշտոնին չի համապատասխանել:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 27)

Հարց 266

Պահպանվում է արդյոք ՄՈՒՀ-ից այլ ՄՈՒՀ տեղափոխվող մանկավարժական աշխատողի տարակարգը:

Այո:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 28)

Հարց 267

Կարո՞ղ է հանրային և մասնավոր ՄՈՒՀ-երի մանկավարժական աշխատողը մասնակցել տարակարգի շնորհման գործընթացին:

Կարող է, լիազոր մարմնի սահմանած կարգով, ՄՈՒՀ-ի կամ սեփական և այլ ֆինանսական միջոցների հաշվին:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 35, մաս 29)

Հարց 268

Ի՞նչ նպատակով է հիմնադիրը ՄՈՒՀ-ին սեփականության կամ օգտագործման իրավունքով տրամադրում անհրաժեշտ գույք:

ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ նախատեսված գործունեության ապահովման նպատակով օրենքով սահմանված կարգով:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 36, մաս 1)

Հարց 269

ՄՈՒՀ-ը ո՞ր միջոցների և գույքի նկատմամբ ունի սեփականության իրավունք:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ՄՈՒՀ-ին նվիրաբերության, հանգանակության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 36, մաս 2)

Հարց 270

Թվարկվածներից նշել ՄՈՒՀ-ի գործունեության ֆինանսավորման երկու աղբյուր:

- Վճարովի ուսուցման ծառայություններից ստացված եկամուտները, այդ թվում՝ ուսման վարձի վճարները.
- ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 37, մաս 1, կետ 3,5)

Հարց 271

Նշեք, օրենքով չարգելված և ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեության տեսակներից ո՞րը կարող են իրականացնել ՄՈՒՀ-երը:

Ստեղծել ՄՈՒՀ-երի և այլ կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների միջև փոխադարձ ծառայությունների և փոխգործակցության ցանց:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 37, մաս 5, կետ 4)

Հարց 272

Նշեք, օրենքով չարգելված և ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեության տեսակներից ո՞րը կարող են իրականացնել ՄՈՒՀ-երը:

Լիցենզավորված կրթական ծրագրերի որակավորումներին և զբաղմունքին համապատասխան, ինչպես նաև աշխատանքի վրա հիմնված ուսումնառության մոդելով գործնական աշխատանքային ուսուցման շրջանակներում մատուցել ծառայություն, կազմակերպել արտադրություն, արտադրանքի իրացում և վաճառք:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 37, մաս 5, կետ 6)

Հարց 273

Ո՞ր ապրանքների ու ծառայությունների փորձարկումը կարող է իրականացնել ՄՈՒՀ-ը:

Իրենց որակավորումներին համապատասխան կամ դրանցից ածանցված ապրանքների ու ծառայությունների:

(ՄԿՈՒ օրենք, հոդված 37, մաս 7)

Հարց 274

Ինչպե՞ս է ավարտվում մեկից ավելի մասնագիտական կրթությունը:

Պետական ամփոփիչ ատեստավորմամբ և շրջանավարտին տրվում է համապատասխան որակավորում:

Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգի 2-րդ կետ

Հարց 275

Որտե՞ղ կարող է հավակնորդը ստանալ մեկից ավելի մասնագիտական կրթություն:

Ինչպես իր ուսումնառած/ուսումնառող, այնպես էլ մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող այլ հաստատություններում կամ կազմակերպություններում:

Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգի 5-րդ կետ

Հարց 276

Թվարկվածներից ո՞ր դեպքում ուսանողը կարող է ստանալ զուգահեռ կրթություն:

Ընդհանուր հիմունքներով՝ ցանկության դեպքում չկրկնելով ուսումնառած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաները (մոդուլները), եթե դրանք համընկնում են նախընտրած մասնագիտության ուսումնական պլանի հետ:

Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգի 7-րդ կետ

Հարց 277

Ի՞նչ հիմունքներով է հրամանագրվում ուսանողը զուգահեռ կրթություն ստանալու դեպքում:

Զուգահեռ կրթություն ստանալու դեպքում ուսանողը հրամանագրվում է վճարովի ուսուցման համակարգում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող ուսանողներից:

Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգի 11-րդ կետ

Հարց 278

Ո՞ր փաստաթուղթն է հանդիսանում հիմք հաջորդական կրթություն ստանալու համար:

Մասնագիտական (այդ թվում՝ բարձրագույն) կրթության դիպլոմը:

Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգի 14-րդ կետ

Հարց 279

Ե՞րբ է հավակնորդը դիմում ներկայացնում մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու համար:

Ուսումնական կիսամյակը սկսելուն նախորդող երկու շաբաթների ընթացքում դիմում է ներկայացնում տվյալ հաստատության տնօրենին (ռեկտորին):

Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգի 16-րդ կետ

Հարց 280

Ո՞ր մարմինն է քննում մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու համար հավակնորդների դիմումները:

Տնօրենի հրամանով ստեղծված ընդունող հանձնաժողովը:

Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգի 18-րդ կետ

Հարց 281

Ո՞վքեր են ընգրկված մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու համար հավակնորդի դիմումները քննող հանձնաժողովում:

Ուսումնական հաստատության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը՝ որպես նախագահ և համապատասխան մասնագիտության գծով դասախոսական կազմի ներկայացուցիչներ:

Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգի 18-րդ կետ

Հարց 282

Ի՞նչ ժամկետում են քննարկվում մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու համար հավակնորդի դիմումները:

Կիսամյակների ուսումնական պարապմունքները սկսելուն հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգի 18-րդ կետ, 3-րդ պարբերություն

Հարց 283

Ի՞նչ ժամկետ է սահմանված ակադեմիական տարբերությունների հանձնման համար:

Ակադեմիական տարբերությունների հանձնման առավելագույն ժամկետը մեկ ամիս է:

Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգի 20-րդ կետ

Հարց 284

Ո՞րն է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման նպատակը:

Որոշել շրջանավարտների մասնագիտական որակավորման մակարդակը՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 2-րդ կետ

Հարց 285

Ի՞նչ նպատակով են յուրաքանչյուր տարի մասնագիտական ուսումնական հաստատություններում ձևավորվում պետական որակավորող հանձնաժողովներ:

Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման նպատակով:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 3-րդ կետ

Հարց 286

Թվարկվածներից որո՞նք չեն մտնում պետական որակավորող հանձնաժողովի գործունեության գործառույթների մեջ:

Մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտներին դասավանդող մանկավարժական անձնակազմի տեսական գիտելիքների և գործնական հմտությունների գնահատումը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 4-րդ կետ

Հարց 287

Ի՞նչ կազմից է բաղկացած պետական որակավորող հանձնաժողովը:

Նախագահից, նախագահի տեղակալից և հանձնաժողովի անդամներից:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 10-րդ կետ

Հարց 288

Ո՞վ է հաստատում պետական որակավորող հանձնաժողովի անվանական կազմը:

Մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը՝ իր հրամանով:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 12-րդ կետ, 5-րդ պարբերություն

Հարց 289

Ի՞նչ ժամկետում է մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենն իր հրամանով հաստատում պետական որակավորող հանձնաժողովի անվանական կազմը:

Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքներն սկսելուց առնվազն երկու շաբաթ առաջ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 12-րդ կետ, 5-րդ պարբերություն

Հարց 290

Ո՞ր ուսանողներն են թույլատրվում պետական ամփոփիչ ստուգման:

Այն ուսանողները, ովքեր կատարել են տվյալ մասնագիտության ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով նախատեսված բոլոր պահանջները:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 14-րդ կետ

Հարց 291

Որքա՞ն է սահմանվում տվյալ մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգումների միջև եղած ժամանակահատվածը:

5-7 օր:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 16-րդ կետ

Հարց 292

Ինչպե՞ս է կատարվում դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությունը կամ պետական քննությունների հանձնումը:

Պետական որակավորող հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի 2/3-ից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 18-րդ կետ

Հարց 293

Ինչպե՞ս են գնահատվում դիպլոմային նախագծի (աշխատանքի) և պետական քննության արդյունքները:

Գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 21-րդ կետ

Հարց 294

Ու՞մ որոշմամբ է դիպլոմային նախագիծ (աշխատանք) պաշտպանած կամ պետական քննությունները դրական հանձնած ուսանողին շնորհվում համապատասխան որակավորում և տրվում պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/:

Պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 22-րդ կետ

Հարց 295

Ի՞նչ դիպլոմ է տրվում մասնագիտական ուսումնական հաստատության շրջանավարտին, որն ուսումնական պլանով նախատեսված առարկաների տարբերակված ստուգարքների (կիսամյակային գնահատականների) և քննությունների 75%-ից ոչ պակասը հանձնել է «գերազանց», իսկ մնացած առարկաները՝ «լավ» գնահատականներով, միաժամանակ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) պաշտպանել կամ պետական քննությունները հանձնել է «գերազանց» գնահատականներով:

Գերազանցության դիպլոմ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 23-րդ կետ

Հարց 296

Այն դեպքերում, երբ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) գնահատվում է «անբավարար», պետական որակավորող հանձնաժողովը որոշում է՝

կարող է արդյոք ուսանողը, հաշվի առնելով հանձնաժողովի դիտողությունները, պաշտպանել դիպլոմային նույն նախագիծը (աշխատանքը) երկրորդ անգամ, թե պետք է մշակի համապատասխան ամբիոնի կողմից տրվող նոր թեմա կամ հանձնի պետական քննություն:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 26-րդ կետ

Հարց 297

Պետական քննությունից «անբավարար» գնահատական ստանալը զրկու՞մ է ուսանողին մյուս պետական քննությունները հանձնելու իրավունքից:

Չի զրկում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 26-րդ կետ, 2-րդ պարբերություն

Հարց 298

Ի՞նչ ժամկետում է թույլատրվում դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին վերահանձնել դիպլոմային նախագիծը (աշխատանքը) կամ պետական քննությունները:

Ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո 3 տարվա ընթացքում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 27-րդ կետ, 1-ին պարբերություն

Հարց 299

Ո՞ր մարմինն է թույլատրում մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտելուց երեք տարուց հետո պետական քննությունների վերահանձնումը:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 27-րդ կետ, 2-րդ պարբերություն

Հարց 300

Կարո՞ղ է մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը երկարացնել այն ուսանողների ուսուցման ժամկետը, որոնք չեն պաշտպանել դիպլոմային նախագիծը (աշխատանքը) կամ չեն հանձնել պետական քննությունները հարգելի պատճառով (փաստաթղթերով հաստատված):

Կարող է երկարացնել մինչև պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքի հաջորդ քննաշրջանը, բայց մեկ տարուց ոչ ավելի:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 28-րդ կետ

Հարց 301

Ի՞նչ փաստաթուղթ է տրվում դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին:

Ուսումնառության լրիվ կուրսն ավարտելու մասին տեղեկանք (հավելված 3) և սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 29-րդ կետ

Հարց 302

Երկրորդ անգամ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին թույլատրվում է՝

Վերականգնվել տվյալ մասնագիտության վերջին կուրսում՝ կրկնելով այդ ամբողջ կուրսի ծրագրային նյութը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 30-րդ կետ

Հարց 303

Ու՞մ է ներկայացնում հաշվետվություն պետական որակավորող հանձնաժողովի նախագահը պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմին և պատճենը նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենին:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 31-րդ կետ, 1-ին պարբերություն

Հարց 304

Ի՞նչ ժամկետում է պետական որակավորող հանձնաժողովի նախագահը հաշվետվություն ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմին և պատճենը նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենին:

Մեկ շաբաթվա ընթացքում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 31-րդ կետ, 1-ին պարբերություն

Հարց 305

Ի՞նչ փաստաթղթով է հաստատվում պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ շրջանավարտների համապատասխան որակավորման և պետական ավարտական նմուշի փաստաթղթի (դիպլոմի) շնորհումը և ուսումնական հաստատության ավարտումը:

Մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի հրամանով:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի 32-րդ կետ

Հարց 306

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության վերակազմակերպման կամ լուծարման

համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, տվյալ հաստատության կողմից պարտադիր կերպով սովորողին տրվում է՝

Ազատման հրամանի պատճենը, հաստատության հետ կնքված պայմանագրի պատճենը, տեղեկանք ուսման վարձի վերաբերյալ, ակադեմիական տեղեկանք և հաստատություն ընդունվելու համար հիմք հանդիսացող նախորդ կրթական ծրագրի ավարտական փաստաթուղթը, եթե սովորողը կատարել է հաստատության նկատմամբ իր պայմանագրային պարտավորությունները (այդ թվում՝ ուսման վարձի մասով):

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգի 3-րդ կետ

Հարց 307

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության վերակազմակերպման կամ լուծարման դեպքում **ի՞նչ ժամկետում է** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հաստատում այն հաստատությունների ցանկը, որոնցում կարող է կազմակերպվել սովորողների հետագա ուսումնառությունը:

Հաստատության վերակազմակերպման կամ լուծարման համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգի 4-րդ կետ

Հարց 308

Ակադեմիական կամ նպատակային արձակուրդում գտնվող, ինչպես նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքին համապատասխան տարկետում ստացած և պարտադիր զինվորական ծառայության զորակոչված նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողը **ի՞նչ հիմքով է** ազատվում ուսանողական պարտականությունների կատարումից:

Ուսումնական հաստատության տնօրենի (ռեկտորի) հրամանով՝ պահպանելով ուսումնական հաստատությունում իր ուսման տեղը և ուսանողական իրավունքը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգի 18-րդ կետ

Հարց 309

Ինչպե՞ս է շարունակում ուսումն ակադեմիական արձակուրդից, հղիության և ծննդաբերության, մինչև 3 տարեկան երեխային խնամելու համար տրամադրվող նպատակային արձակուրդներից վերադարձած, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված ուսանողը:

Նույն Հաստատությունում և նույն մասնագիտությամբ (մասնագիտացմամբ)՝ Հաստատություն վերադառնալու օրվան հաջորդող այն կիսամյակից և կրթական ծրագրի այն փուլից, որտեղից ուսումն անավարտ է թողել:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգի 19-րդ կետ

Հարց 310

Ի՞նչ հիմունքով է իրականացվում Հայաստանում ուսանողական իրավունքը վերականգնած և այլ մասնագիտություն (մասնագիտացում) տեղափոխված անձի ուսումնառությունը:

Վճարովի հիմունքով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող ուսանողից, անվճար ուսուցման համակարգում ուսումնառած և ակադեմիական ու նպատակային արձակուրդից վերադարձած ուսանողից, ինչպես նաև այն դեպքերի, երբ տվյալ տարվա համար պետական կառավարման լիազորված մարմնի կողմից Հաստատությանը հատկացվել են միայն անվճար տեղեր և առկա է թափուր տեղ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգի 22-րդ կետ

Հարց 311

Ո՞ր դեպքում է կարող ուսման վճարը չվճարելու հիմքով հեռացված անձը շարունակել իր ուսումնառությունը:

Ազատման/հեռացման հրամանի օրվանից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսանողական իրավունքի վերականգնման դիմում ներկայացնելու և վարձավճարը վճարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ օրերը համընկնում են կիսամյակային քննաշրջանի հետ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգի 30-րդ կետ

Հարց 312

Ո՞ր դեպքում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրիր իրականացնող ուսումնական հաստատության տնօրենը հրամանագրում ուսանողական իրավունքը վերականգնած ուսանողին:

Ակադեմիական տարբերությունների բացակայության կամ ակադեմիական տարբերությունները դրական հանձնելու դեպքում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգի 37-րդ կետ

Հարց 313

Ու՞մ համաձայնությամբ է կատարվում ուսանողի տեղափոխումը մեկ նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունից մեկ այլ համապատասխան մակարդակի կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություն:

Տնօրենների:

Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգի 3-րդ կետ

Հարց 314

Ո՞ր կիսամյակում է արգելվում ուսանողի տեղափոխումը մեկ նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունից մեկ այլ համապատասխան մակարդակի կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություն:

Առաջին կիսամյակում:

Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգի 4-րդ կետ

Հարց 315

Տեղափոխման ընթացքում թվարկվածներից ո՞ր պայմանի ապահովման պարագայում է թույլատրվում մասնագիտությունների փոփոխություն:

Միայն ուսանողի կողմից նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների (մոդուլների) տարբերությունները 8-ը չգերազանցելու պայմանի ապահովման պարագայում:

Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգի 5-րդ կետ

Հարց 316

Ո՞րն է համարվում ակադեմիական տարբերություն:

Նախընտրած մասնագիտության գծով հաստատված ուսումնական պլանով ուսանողի ուսումնառություն չանցած, չուսումնասիրած կամ ամփոփիչ ստուգում չանցած առարկաները և առարկաների (մոդուլների) ժամաքանակների 30 և ավելի տոկոս կազմող տարբերությունները:

Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգի 6-րդ, 1-ին պարբերություն

Հարց 317

Ո՞ր մարմինն է կազմակերպում ուսումնական հաստատության վերակազմակերպման կամ լուծարման դեպքում այլ ուսումնական հաստատություն ուսանողի տեղավորումը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգի 7-րդ կետ

Հարց 318

Ո՞ր մարմնի թույլտվությամբ կարող է կատարվել հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունից ուսանողի տեղափոխումը պետական ուսումնական հաստատություն:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ընդունող ուսումնական հաստատության տնօրենի ներկայացմամբ:

Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգի 8-րդ կետ

Հարց 319

Ե՞րբ է ընդունվում տեղափոխման մասին ուսանողի դիմումը:

Ուսումնական կիսամյակը սկսելուն նախորդող երկու շաբաթների ընթացքում, իսկ այլ ժամկետում ուսանողի տեղափոխությունը կատարվում է ուսումնական հաստատության ներկայացմամբ և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համաձայնությամբ՝ պահպանելով կարգով սահմանված պահանջները:

Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգի 10-րդ կետ

Հարց 320

Ո՞վ է կայացնում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողներին ակադեմիական արձակուրդ տալու մասին որոշումը:

Ուսումնական հաստատության ղեկավարը (պետը, տնօրենը, ռեկտորը):

Հայաստանի Հանրապետության նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգի 4-րդ կետ

Հարց 321

Կարող են արդյո՞ք պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ ուսումնառող և կրթաթոշակ ստացող սովորողները, ուսանողները (մագիստրանտները) և ասպիրանտներն ակադեմիական արձակուրդից վերադառնալուց հետո վերականգնվել ուսուցման նույն համակարգում:

Այո:

Հայաստանի Հանրապետության նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգի 5-րդ կետ, 1-ին պարբերություն

Հարց 322

Ի՞նչ ժամկետում են ԿՏԱԿ-ը՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում, իսկ տնօրենը (ռեկտորը) Հաստատության Դիմորդի անկյունում, պաշտոնական կայքէջում (առկայության դեպքում) և սոցիալական ցանցի էջում հրապարակում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարությունը:

Լիազորված մարմնի կողմից առկա (ստացիոնար) կամ հեռակա ուսուցման տեղերը հատկացվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 10-րդ կետի, 1-ին պարբերություն

Հարց 323

Ի՞նչ ժամկետում են ընդունվում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում մրցույթին մասնակցելու համար դիմորդի դիմում հայտը և փաստաթղթերը՝ առկա (ստացիոնար) ուսուցման համար:

Մրցույթին մասնակցելու համար դիմորդի դիմում հայտը և փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ընդունվում են ՄԿԿՏՀ դիմորդների հայտագրման համակարգում ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից սկսած՝ ոչ ոլորտային մասնագիտություններով՝ մինչև օգոստոսի 17 ներառյալ՝ ժամը 18:00, իսկ ոլորտային մասնագիտություններով՝ մինչև օգոստոսի 8-ը ներառյալ՝ ժամը 18:00, իսկ քննություններն անցկացվում են օգոստոսի 9-ից 17-ը ընկած ժամանակահատվածում:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 11-րդ կետի 1-3–րդ ենթակետեր

Հարց 324

Ի՞նչ ժամկետում են ընդունվում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման մրցույթին մասնակցելու համար դիմորդի դիմում հայտը և փաստաթղթերը:

Հեռակա ուսուցման մրցույթին մասնակցելու համար դիմորդի դիմում հայտը և փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ընդունվում են կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից սկսած՝ մինչև նոյեմբերի 25-ը ներառյալ՝ մինչև ժամը 18-00:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետ

Հարց 325

Ե՞րբ են հրապարակվում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքները:

Տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 15-րդ կետ

Հարց 326

Դիմորդը քանի՞ մասնագիտության հայտագրմամբ կարող է դիմել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն ընդունվելու համար:

Դիմորդը կարող է դիմել մեկ ուսումնական հաստատություն մեկ մասնագիտության՝ որակավորման, մասնագիտացման, երաժշտական գործիքի տեսակի կամ մարզաձևի հայտագրմամբ՝ անվճար և վճարովի ուսուցման հիմունքով:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 33-րդ կետ

Հարց 327

Թվարկվածներից ո՞ր դեպքում է մերժվում դիմորդի դիմում հայտը ընդունող հանձնաժողովի կողմից:

Առկա (ստացիոնար) ուսուցմամբ հիմնական կրթության հիմքի և մասնագիտության (բացառությամբ՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով «0215 Երաժշտություն և կատարողական արվեստ» բաժնի, «Գեղանկարչություն», «Քանդակագործություն» մասնագիտությունների և պետության կողմից չֆինանսավորվող ուսումնական հաստատությունների) 15, իսկ ՀՀ մարզերում գործող ուսումնական հաստատությունների 13 դիմում հայտից քիչ լինելու դեպքում՝ դիմում հայտերի ընդունման վերջնաժամկետից 1 օր առաջ, որի մասին նույն օրը տեղեկացվում է դիմումատուին էլեկտրոնային փոստի և հեռախոսակապի միջոցով:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 34 կետի 3-րդ ենթակետ

Հարց 328

Թվարկվածներից ո՞ր սկզբունքով է անցկացվում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ոչ ոլորտային մասնագիտությամբ ընդունելության մրցույթը Լիազորված մարմնի կողմից ըստ մասնագիտությունների հատկացված անվճար ուսուցման տեղում:

Անվճար ուսուցման տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), արհեստագործական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության համար սույն կարգի ցանկով ընդունելության մրցութային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 39-րդ կետի 1-ին ենթակետ

Հարց 329

Ի՞նչ ժամկետում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տնօրենը մրցույթով անցած դիմորդներին հրամանագրում որպես ուսանող:

2 աշխատանքային օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 61-րդ կետ

Հարց 330

Թվարկվածներից ո՞ր փաստաթղթերին է պարտավոր ծանոթացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը մինչև դիմորդի հետ համապատասխան պայմանագիր կնքելը:

Հաստատության լիցենզիային և կանոնադրությանը, ներքին կանոնակարգերին, կնքվելիք պայմանագրին, պետական հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում), կրթության գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերին և կրթական ծրագրի կազմակերպման մեթոդաբանությանն ու այլ առանձնահատկություններին:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 63 կետ

Հարց 331

Թվարկվածներից ո՞րն է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության առկա (ստացիոնար) ուսուցման համար ուսումնական խմբում ուսանողների սահմանված առավելագույն թիվը:

Մինչև 25 մարդ:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 66-րդ կետ

Հարց 332

Ուսումնական հաստատության տնօրենը ու՞մ է տրամադրում դասաժամերը թափուր տեղ առաջանալու դեպքում:

Նույն ուսումնական հաստատությունում տվյալ առարկան (մոդուլը) դասավանդող կամ համապատասխան որակավորում ունեցող մանկավարժին՝ պահպանելով ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման 5-րդ Հավելվածով հաստատված ուսումնական հաստատության աշխատողի աշխատանքի առավելագույն ծավալը չգերազանցելու պայմանը:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 3-րդ կետ

Հարց 333

Հաստատությունում համապատասխան մանկավարժ չլինելու դեպքում տնօրենը ու՞մ կարող է որոշակի ժամկետային պայմանագրով ընդունել աշխատանքի թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթի կայանալը:

Մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին բավարարող անձի:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 4-րդ կետ

Հարց 334

Ի՞նչ ժամկետում է տրվում մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը մանկավարժական աշխատողի (դասախոս (բացառությամբ՝ զինվորական ղեկավարի) կամ արտադրական ուսուցման վարպետ) թափուր տեղ առաջանալու դեպքում:

Թափուր տեղ առաջանալու օրվանից հետո 7-օրյա ժամկետում, իսկ նախապես թափուր տեղի առաջանալու օրը հստակ լինելու դեպքում, ոչ շուտ քան այն առաջանալուց մեկ ամիս առաջ:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 6-րդ կետ

Հարց 335

Ի՞նչ ժամկետում է ուսումնական հաստատության տնօրենը տեղեկացնում պետական լիազորված մարմնին Մանկավարժի թափուր տեղ առաջանալու մասին:

Երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով Թափուր տեղի անվանումը, աշխատանքային ծանրաբեռնվածությունը (հստակ լինելու դեպքում) և Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջները՝ vetarmenia.am կայքէջում տեղադրելու նպատակով:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 8-րդ կետ

Հարց 336

Ե՞րբ է կազմակերպվում մանկավարժական աշխատողի (դասախոս (բացառությամբ՝ զինվորական ղեկավարի) կամ արտադրական ուսուցման վարպետ) թափուր տեղը համալրելու համար մրցույթը:

Փաստաթղթերի ընդունման ավարտման օրվանից հետո՝ երրորդ աշխատանքային օրը:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ ի 13-րդ կետ

Հարց 337

Նշվածներից ո՞ր փաստաթուղթը չի ներկայացնում մանկավարժական աշխատողի (դասախոս (բացառությամբ՝ զինվորական ղեկավարի) կամ արտադրական ուսուցման վարպետ) թափուր տեղը համալրելու մրցույթին մասնակցելու համար անձը հաստատության տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին:

Ընտանիքի անդամների անձնագրերի պատճենները:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 15-րդ կետ

Հարց 338

Ո՞վ է հաստատում մանկավարժական աշխատողի (դասախոս (բացառությամբ՝ զինվորական ղեկավարի) կամ արտադրական ուսուցման վարպետ) թափուր տեղը համալրելու համար ձևավորվող մրցութային հանձնաժողովի անվանական կազմը:

Հաստատության տնօրենը՝ այդ մասին տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 19-րդ կետ

Հարց 339

Ո՞ր դեպքում է մանկավարժական աշխատողի (դասախոս (բացառությամբ՝ զինվորական ղեկավարի) կամ արտադրական ուսուցման վարպետ) թափուր տեղը համալրելու համար ձևավորված մրցութային հանձաժողովի նիստը համարվում իրավազոր:

Եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի առնվազն 4 անդամ:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 22-րդ կետ

Հարց 340

Քանի՞ կողմ ձայնով են ընդունվում մանկավարժական աշխատողի (դասախոս (բացառությամբ՝ զինվորական ղեկավարի) կամ արտադրական ուսուցման վարպետ) թափուր տեղը համալրելու համար ձևավորված մրցութային հանձնաժողովի որոշումները:

Առնվազն «3» կողմ ձայնով:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 23-րդ կետ

Հարց 341

Ինչպե՞ս է կազմակերպվում մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթը:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 29-րդ կետ

Հարց 342

Մրցույթի արդյունքում ո՞ր Մասնակիցն է ճանաչվում մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի հաղթող:

Ով քվեարկության արդյունքում հավաքել է Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի և առավելագույն «կողմ» ձայները կամ ում ընտրել է Հաստատության տնօրենը՝ քվեարկության արդյունքում Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի և հավասար «կողմ» ձայն հավաքած Մասնակիցներից:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 40-րդ կետ

Հարց 343

Ո՞րն է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի նպատակը:

Կրթությունը մատչելի դարձնել օտարերկրացիների համար:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի 2-րդ կետ

Հարց 344

Ինչպե՞ս է իրականացվում օտարերկրացիների ընդունելությունը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Իրենց ընտրությամբ՝ ընդհանուր հիմունքներով կամ Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգով սահմանված պայմաններով՝ առնվազն հիմնական կրթության հիմքով:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի 4-րդ կետ

Հարց 345

Նշվածներից ո՞ր հիմքով է կատարվում օտարերկրացիների ընդունելությունը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Պայմանագրային հիմունքով (վճարովի):

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի 6-րդ կետ

Հարց 346

Նշվածներից ո՞ր փաստաթղթերն օտարերկրացիները, որոնք ցանկանում են սովորել Հայաստանի Հանրապետությունում, պետք է ներկայացնեն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Կրթական աստիճանի ավարտական փաստաթղթի պատճենը:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի 7-րդ կետ, 4-րդ ենթակետ

Հարց 347

Ո՞ր օտարերկրացիներն են մասնակցում հաստատության նախապատրաստական դասընթացներին:

Օտարերկրացիները, որոնք չեն տիրապետում հայերենին, ռուսերենին կամ անգլերենին մասնակցում են հաստատության նախապատրաստական դասընթացներին:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի 15-րդ կետ

Հարց 348

Ինչպե՞ս են իրականացվում օտարերկրացիների ուսուցումը, հեռացումը (ազատումը) և վերականգնումը, շարժունությունը:

Հայաստանի Հանրապետությունում գործող կարգերին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի 19-րդ կետ

Հարց 349

Ի՞նչ դրույթ է պարտավոր ուսումնական հաստատությունը օտարերկրացու հետ կնքվող պայմանագրում ներառել:

Հայաստանի Հանրապետության մուտքի արտոնագիր և ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի 22-րդ կետ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հարց 1

Ի՞նչ է ուսուցման մեթոդը՝

Մանկավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված և որոշակիորեն կարգավորված գործունեություն:

գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա.,

Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./
Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության
ազգային ինստիտուտի հրատ., 2004.- 180 էջ

Հարց 2

Ինչո՞վ է պայմանավորված դասի ընթացքում կիրառվող մեթոդների ընտրությունը՝

Դասի նպատակով:

գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./
Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության
ազգային ինստիտուտի հրատ., 2004.- 180 էջ

Հարց 3

Նշվածներից ո՞րն է դաստիարակության մեթոդ:

Դրական օրինակի մեթոդը:

Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:
Գիրք II , /– Եր.: Զանգակ-97, 2005թ., գլ. IV, 232 էջ

Հարց 4

Դպրոցական բռնությունը՝

Բռնությունը տարատեսակ է, որի դեպքում ուսուցիչների (կամ աշակերտների) կողմից ուժ է կիրառվում աշակերտների նկատմամբ կամ, ինչը պատահում է չափազանց հազվադեպ, աշակերտների կողմից ուժ է կիրառվում ուսուցչի նկատմամբ:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան,
Ճարտարագետ, 2016

Հարց 5

Դպրոցական բռնությունը՝

Կարող է լինել հուզական և ֆիզիկական բնույթի:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան,
Ճարտարագետ, 2016

Հարց 6

Հուզական բռնության ձև է՝

Ծաղրը, մականուններ կպցնելը, անվերջ նկատողությունները, ոչ օբյեկտիվ գնահատականները, ստորացումն այլ երեխաների ներկայությամբ և այլն:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

Հարց 7

Ո՞րն է կառավարման համակարգի վրա ազդող ամենաբացասական գործոնը:

Նպատակի սխալ ընտրությունը:

Бандурка А. М., Бочарова С. П., Землянская Е. В., "Психология управления". Харьков, 1998г.

Հարց 8

Ի՞նչ ենք հասկանում կազմակերպության առաքելություն ասելով:

Առաքելությունը կազմակերպության համար ցանկալի ապագայի մտապատկերն է:

Բաժին 2, Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., Էլոյան Ն., Շահրոքի Ֆ. /Դպրոցի ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, ԱՅՈԵՔՍ, Երևան, 2003թ, 296 էջ

Հարց 9

Ուսումնական հաստատությունում հոգեբանական անվտանգ միջավայրը.

Փոխազդեցության այն միջավայրն է, որն ազատ է հոգեբանական բռնության դրսևորումներից և ռեֆերենտային նշանակություն ունի աշակերտների համար:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

Հարց 10

Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ առաջին խումբը՝

Նորարարներն են, որ մշտապես ձգտում են նորի իրագործմանը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

Հարց 11

Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ երկրորդ խումբը՝

Նորամուծությունների վաղ իրականացնողներն են, որ անմիջապես գնում են նորարարների հետևից, բայց նրանցից տարբերվում են ցածր ռիսկի աստիճանով և հանդես են գալիս որպես խորհրդականներ:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

Հարց 12

Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ երրորդ խումբը՝

Յուրացնում են նորամուծություններն անմիջապես վաղ իրականացնողների հետ, բայց հազվադեպ են հանդես գալիս առաջնորդի դերում:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

Հարց 13

Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ չորրորդ խումբը՝

Նորամուծություններն ուշ իրականացնող մեծամասնությունն է, որին հատուկ է սկեպտիցիզմը, նորամուծությունները յուրացնում են որպես միջին սուբյեկտ՝ իրենց պահանջմունքների գնահատման արդյունքում:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

Հարց 14

Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ հինգերորդ խումբը՝

Կազմում են տատանվողները, որոնք ամենավերջինն են յուրացնում նորամուծությունը, նրանց հատուկ է բավական կայուն վերաբերմունքը:

(Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, հեղինակային հրատարակություն 2020, EU4YOUTH, Save the Children, Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան)

Հարց 15

Կոնֆլիկտների կառավարումը կազմակերպությունում:

Կոնֆլիկտային գործընթացների կառավարման միջոցների (մեթոդների) կիրառման նպատակաուղղված և մասնագիտական գործունեություն է, որը հնարավորություն է տալիս կոնֆլիկտի կողմերին վերհանելու իրենց շահերի տարբերություններն ու նմանությունները:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 4-րդ, էջ 141)

Հարց 16

Որո՞նք են կոնֆլիկտների կառավարման փուլերը:

Կոնֆլիկտի ըմբռնում և իրավիճակի նախնական գնահատում, կոնֆլիկտի պատճառների ուսումնասիրում, կոնֆլիկտի լուծման ուղիների որոնում և համապատասխան գործողությունների իրականացում:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 4-րդ, էջ 166-167)

Հարց 17

Ժամանակի կառավարումը:

Անձնական ժամանակի արդյունավետ տնօրինման կարողությունն է և ենթադրում է նախատեսված ժամանակահատվածում ըստ առաջնահերթությունների իրականացվող գործողությունների արդյունավետ պլանավորում, կազմակերպում, իրականացում, ստուգում և/կամ գնահատում:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 6-րդ, էջ 194)

Հարց 18

Ժամանակի հիմնական չորս տեսակներն են:

Ֆիզիկական, կենսաբանական, հասարակական/սոցիալական, հոգեբանական:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 6-րդ, էջ 195)

Հարց 19

Ժամանակի «արագացման» ռազմավարություն:

Գործողությունների կատարման արագացում, պահանջվող ժամանակի արդյունավետ կանխատեսում, արդյունավետ որոշումների կայացում, հաղորդակցությունների արդյունավետ համակարգի ձևավորում, յուրաքանչյուր աշխատակցի կատարողականի արդյունավետության բարձրացում, մրցակիցներին գերազանցելուն ուղղված գործողությունների իրականացում:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 6-րդ, էջ 199)

Հարց 20

Ժամանակի «դանդաղեցման» ռազմավարություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների, տեխնոլոգիական սարքավորումների, նյութատեխնիկական ու այլ միջոցների օգտագործման (շահագործման) ժամկետների երկարաձգում, հմուտ աշխատակիցների պահպանմանն ու զարգացմանն ուղղված կադրային քաղաքականության մշակում և կիրառում, խնայողությունների իրականացում և ռազմավարական պաշարի ապահովում:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 6-րդ, էջ 199)

Հարց 21

Ժամանակի «կուտակման» ռազմավարություն:

Գործունեության բոլոր փուլերում առաջնահերթությունների սահմանում, աշխատակիցների ժամանակի կառավարման հմտությունների ձևավորում և զարգացում, կազմակերպության աշխատանքային ժամաքանակի վերակազմավորում և վերաբաշխում:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 6-րդ, էջ 199)

Հարց 22

Ժամանակի «կանոնակարգման» ռազմավարություն:

Ժամանակի արդյունավետ պլանավորում, հետադարձ կապի և վերահսկողության արդյունավետ համակարգի ներդրում, ժամանակի կառավարման և աշխատակիցների մոտիվացիայի համակարգային կապի ստեղծում:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 6-րդ, էջ 200)

Հարց 23

Ռազմավարական պլանավորման գլխավոր նպատակը:

Կազմակերպության ներքին և արտաքին միջավայրերի հավասարակշռումն է և այդ հավասարակշռության պահպանումը երկարաժամկետ կտրվածքով:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 1-ին, էջ 12-13)

Հարց 24

SWOT վերլուծությունը՝ որպես ռազմավարական պլանավորման գործիք:

Կազմակերպության ուժեղ և թույլ կողմերի և հնարավորությունների ու վտանգների կամ ռիսկերի վերլուծությունն է, որը կազմակերպության գործունեության ռազմավարական վերլուծության ու գնահատման բաղադրիչ է և նպաստում է ռազմավարական պլանավորմանն ու ռազմավարության արդյունավետ մշակմանը:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 1-ին, էջ 13)

Հարց 25

SWOT վերլուծության բազմակողմանի գնահատման արդյունքում կազմակերպությունը:

Հիմք է ստեղծում ռազմավարական որոշումների կայացման և դրանց այլընտրանքային գնահատման համար՝ անհրաժեշտ համապարփակ տեղեկություններ և տվյալներ հավաքագրելով ներքին միջավայրի, սեփական հնարավորությունների և ռեսուրսների, ինչպես նաև արտաքին միջավայրի առանցքային գործոնների վերաբերյալ:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 1-ին, էջ 17)

Հարց 26

Բենչմարքինգը՝ որպես ռազմավարական կառավարման գործիք:

Շարունակաբար իրականացվող համակարգային և համագործակցային գործընթաց է, որի նպատակն է չափել և համեմատել կազմակերպության (ենթակառուցվածքային ստորաբաժանման) կատարողականի ու գործունեության առանցքային ցուցանիշները մրցակից կամ ոլորտի առաջատար կազմակերպությունների ցուցանիշների հետ:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 1-ին, էջ 29)

Հարց 27

Մարդկային ռեսուրսների կառավարումը:

Մարդկային ներուժի արդյունավետ օգտագործման նպատակով կազմակերպության աշխատակիցների շահերի, վարքագծի և գործունեության վրա կառավարչական ներազդեցության սկզբունքների, մեթոդների, միջոցների ու ձևերի կիրառման գործընթացն է:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 2-րդ, էջ 99)

Հարց 28

Կարիերայի ուղղորդումը/կառավարումը՝

Ծառայությունների և գործունեության տեսակ է, որն ուղղված է օժանդակելու անձին, անկախ տարիքից՝ իր ողջ կյանքի ընթացքում ցանկացած պահի կատարելու կրթությանը, ուսուցմանը և զբաղմունքին առնչվող որոշումներ և կառավարելու իր կարիերան:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 7-րդ, էջ 211)

Հարց 29

Գործունեության արդյունավետության ցուցանիշները (ԳԱՑ)՝

Չափումներ են, որոնք ուղղված են կազմակերպության համար առանցքային նշանակություն ունեցող ոլորտներում նրա ներկա և ապագա գործունեության արդյունավետության չափմանը և գնահատմանը:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 1-ին, էջ 39)

Հարց 30

Շահակիցները՝

Այն անհատներն են, խումբը կամ կառույցը, որոնք դրական կամ բացասական կերպով կրում են կազմակերպության գործունեության ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը և շահագրգռված են

կազմակերպության հաջողություններով ու ձեռքբերումներով, կազմակերպության արտադրողականությամբ ու վերջնարդյունքներով, կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների արդյունավետությամբ և որակով:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 1-ին, էջ 61)

Հարց 31

Առաջնորդի գործառույթներն են՝

Սահմանել և վերափոխել կազմակերպության գործունեության ուղղությունները՝ գերակայություններն արտացոլելով առաքելությունում և ռազմավարական նպատակներում ու խնդիրներում, թիրախավորել և հայթայթել նոր ռեսուրսների աղբյուրներ, ստեղծել թիմ՝ հստակեցնելով թիմի առաջադրանքները և նպատակները:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 1-ին, էջ 91)

Հարց 32

Կառավարչի գործառույթներն են՝

Արդյունավետորեն կառավարել կազմակերպության գործունեությունն ու դրա բնականոն ընթացքն ապահովող գործընթացները, նպատակային բաշխել և կառավարել ռեսուրսները, լիազորել ռեսուրսների կիրառումը՝ ըստ ռազմավարական նպատակների և խնդիրների:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 1-ին, էջ 92)

Հարց 33

Մոտիվացիան՝

Անձի կարևորագույն շարժիչ ուժն է, ներքին և արտաքին գործոնների ամբողջություն, որն անձին դրդում է կատարելու գործողություններ՝ որոշակի նպատակների հասնելու կամ գործողության ընթացքից բավարարվածություն ստանալու համար:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 1-ին, էջ 106)

Հարց 34

Կազմակերպությունում աշխատակազմի մոտիվացիան.

Դա միջոցառումների համակարգ է, որոնք խթանում են աշխատակազմին ոչ միայն ուղղակի աշխատել, այլ նաև բարձրացնում են հատուկ ջանասիրությամբ աշխատելու ցանկությունը,

աշխատանքում բարձր արդյունքների հասնելու ցանկությունը և մասնագիտական մակարդակի բարձրացման ցանկությունը:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 1-ին, էջ 107-108)

Հարց 35

Հաղորդունակությունը.

Այն կարողությունն է, որով մարդը բնականոն փոխհարաբերություններ է հաստատում այլ մարդկանց հետ, համարժեքորեն ձևակերպում է իր խոսքը, տեղեկություններ ստանում՝ վերծանելով դրանք, զանազանելով կարևորն ու երկրորդականը՝ ապահովելով պատշաճ հետադարձ կապը:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 8-րդ, էջ 232)

Հարց 36

SWOT վերլուծության միջոցով կազմակերպությունը կարող է՝

Հավասարակշռել իր ներքին և արտաքին միջավայրերի գործոնների ազդեցությունը՝ մշակելով որոշակի մարտավարություններ, որոնք առավել դյուրին կդարձնեն կազմակերպության զարգացման ռազմավարության իրագործումը և գործունեության ցանկալի արդյունքների ձեռքբերումը:

(«Կառավարչական հմտություններ» ձեռնարկ, գլուխ 1-ին, էջ 22)

ՀԱՐՑԵՐ

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների նախագծերի մշակման ուղեցույցը և մոդուլի դասիչի ձևաչափը հաստատելու մասին» ՀՀ ԿԳ նախարարի 21.12.2011թ. N 1318-Ա/Ք հրամանից

Հարց 37

Քանի՞ ժամը չպետք է գերազանցի ուսանողի շաբաթական բեռնվածության առավելագույն ծավալը՝

Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

(ՀՀ ԿԳ նախարարի N1318-Ա/Ք հրաման, գլուխ 5-րդ, կետ 17-3)

Հարց 38

Քանի՞ ժամը չպետք է գերազանցի ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը՝

Ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության:

(ՀՀ ԿԳ նախարարի N1318-Ա/Ք հրաման, գլուխ 5-րդ, կետ 17-4)

Հարց 39

Միջին մասնագիտական կրթության տվյալ մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

Կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները:

(ՀՀ ԿԳ նախարարի N1318-Ա/Ք հրաման, գլուխ 6-րդ, կետ 21-1)

Հարց 40

Միջին մասնագիտական կրթության տվյալ մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ:

Պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները:

(ՀՀ ԿԳ նախարարի N1318-Ա/Ք հրաման, գլուխ 6-րդ, կետ 21-2)

Հարց 41

Միջին մասնագիտական կրթության տվյալ մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

Պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները:

(ՀՀ ԿԳ նախարարի N1318-Ա/Ք հրաման, գլուխ 6-րդ, կետ 21-3)

Հարց 42

Միջին մասնագիտական կրթության տվյալ մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

Պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

(ՀՀ ԿԳ նախարարի N1318-Ա/Ք հրաման, գլուխ 6-րդ, կետ 21-8)

Հարց 43

Միջին մասնագիտական կրթության տվյալ մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

Պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը:

(ՀՀ ԿԳ նախարարի N1318-Ա/Ք հրաման, գլուխ 6-րդ, կետ 21-5)

Հարց 44

Ինչպե՞ս է որոշվում նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները.

Յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

(ՀՀ ԿԳ նախարարի N1318-Ա/Ք հրաման, գլուխ 5-րդ, կետ 17-6)

Հարց 45

Որտե՞ղ են անցկացվում ուսումնական պրակտիկաները.

Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում:

(ՀՀ ԿԳ նախարարի N1318-Ա/Ք հրաման, գլուխ 5-րդ, կետ 18-4)

Հարց 46

Պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անցկացնել.

Առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

(ՀՀ ԿԳ նախարարի N1318-Ա/Ք հրաման, գլուխ 5-րդ, կետ 19-3)

ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐ

Սահրադյան Ա, .Կարողություններին միտված պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման ուղեցույց /Ա. Սահրադյան.-Եր.: Կրթության ազգային ինստիտուտ, 2015-160էջ:

կարճ՝ Սահրադյան Ա, .Կարողություններին միտված ԿՊՉ կազմակերպման ուղեցույց

Հարց 47

Մասնագիտական կրթության նպատակներով պայմանավորված ինչպե՞ս է առավել նպատակահարմար դիտարկել կարողությունը:

Որպես մասնագետի մոտ ձևավորված որակ, ունակություն՝ մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքները կոնկրետ մասնագիտական խնդիրների լուծման ընթացքում կիրառելու համար:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՉ կազմակերպման ուղեցույց», էջ 8, պարբ.1, նախադաս.2)

Հարց 48

Ե՞րբ է ՄԿՈՒ մասնագետը համարվում կարողունակ:

Երբ ի վիճակի է մասնագիտական գիտելիքները կիրառել իր մասնագիտական գործունեության պարտականությունները կատարելու ընթացքում՝ ըստ կոնկրետ իրավիճակների առաջացած մասնագիտական խնդիրներին լուծում տալու համար:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՉ կազմակերպման ուղեցույց», էջ 8, պարբ.1, նախադաս.3)

Հարց 49

Մոդուլային ուսուցման ընթացքում ինչպե՞ս ձևավորել թեմաները, որ ուսանողները հնարավորություն ունենան կատարել կարողությամբ ձևավորված պահանջները:

Ներառել համապատասխան մասնագիտական առարկաների որոշակի թեմաների անհրաժեշտ կարողություններ ձևավորող մասերը:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՁ կազմակերպման ուղեցույց», էջ 9, նախադաս.9)

Հարց 50

Նշվածներից ո՞ր նախապայմաններն են հաշվի առնվում մասնագիտությունների և որակավորումների պահանջվող կարողությունները ձևավորվելու համար:

ՀՀ Զբաղմունքների դասակարգչով կրթության տվյալ աստիճանին համապատասխան զբաղմունքի շրջանակում ներառված պարտականությունները և դրանից բխող խնդիրները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՁ կազմակերպման ուղեցույց», էջ 10, պարբ. 1, նախադաս.3)

Հարց 51

Նշվածներից ո՞ր նախապայմաններն են հաշվի առնվում մասնագիտությունների և որակավորումների պահանջվող կարողությունները ձևավորվելու համար:

Կոնկրետ բնագավառների գործատուների ներգրավմամբ ձևավորված մասնագիտական գործողությունները, որոնք ավելի են որոշակիացնում տվյալ որակավորման հետ կապված մասնագիտական գործունեության մանրամասները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՁ կազմակերպման ուղեցույց», էջ 10, պարբ. 1, նախադաս.3)

Հարց 52

Ի՞նչ առանձնահատկություններ կան կարողությունների ձևավորմանը միտված ուսուցման և ուսումնառության իրականացման ժամանակ:

Ուսումնական գործընթացը, հատկապես հատուկ մասնագիտական առարկայախմբի միավորների համար, կազմակերպվում և իրականացվում է ոչ թե մասնագիտական առանձին առարկաների

ծրագրերի հիման վրա, այլ դրանց համատեղման արդյունքում ձևավորված մոդուլային ուսումնական ծրագրերի հիման վրա:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 11, պարբ. 1, կետ 1, նախադաս.1)

Հարց 53

Ո՞րն է կարողությունների ձևավորմանը միտված ուսումնառության առավելությունն առարկայական ծրագրերից:

Որոշակի մասնագիտական առարկաների գիտելիքներ ուսանողը յուրացնում է անմիջապես դրանք կիրառելով:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 11, պարբ. 1, կետ 1, նախադաս.2)

Հարց 54

Մոդուլային ուսումնական ծրագրերում ինչպե՞ս է դրսևորվում մասնագիտական առարկաների միջև փոխադարձ կապը:

Գործնական ուսուցման ձևով:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 11, պարբ. 1, կետ 1, նախադաս.3)

Հարց 55

Ինչպե՞ս է ուսանողը ձեռք բերում գործնական հմտություններ:

Ուսումնառության ընթացքում իր մասնագիտական գործունեության պարտականությունների շրջանակին վերաբերող գործողությունները աստիճանաբար կատարելու միջոցով:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 12 պարբ. 1, կետ 2,)

Հարց 56

Ինչպե՞ս է ուսուցանվում մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքները:

Գիտելիքը սերտորեն շաղկապվում է գործնական կարողությունների ձևավորման ենթատեքստում:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 12 պարբ.1, կետ 3)

Հարց 57

Մոդուլային ուսուցման դեպքում ի՞նչ գործառույթ է իրականացնում դասաանդողը:

Ուղղորդողի գործառույթ՝ ակտիվ ուսումնառողի դերը թողնելով ուսանողին:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 12 պարբ. 1, կետ 4, նախադաս.1)

Հարց 58

Ինչպե՞ս է ուսանողը յուրացնում նյութը մոդուլային ուսուցման դեպքում:

Ուսանողն ամեն ինչ յուրացնում է ոչ թե դասախոսի կողմից պատրաստի մատուցվող նյութի հիման վրա, այլ ինքնուրույն կատարելով:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 12, պարբ. 1, կետ 4, նախադաս.2)

Հարց 59

Որտե՞ղ և ի՞նչ պայմաններում է իրականացվում մոդուլային ուսուցման և ուսումնառության գործընթացը:

Իրականացվում է աշխատատեղում, կամ առավելագույն չափով աշխատատեղին համապատասխանեցված պայմաններում:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 12, պարբ. 1, կետ 5)

Հարց 60

Ի՞նչ է հիման վրա է գնահատվում ուսումնառության արդյունքների ձեռքբերումները:

Կարողությունների ապահովման մակարդակի՝ հիմք ընդունելով նաև դրա հետ կապված գիտելիքները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 12, պարբ. 1, կետ 6)

Հարց 61

Ի՞նչ պահանջներ են ներկայացվում մասնագիտության (որակվորման) նկարագրում:

Ամփոփ ձևով ներկայացվում են այն պահանջները, որոնք աշխատաշուկան ներկայացնում է տվյալ որակավորման մասնագետին:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 16, պարբ.3, նախաս.2)

Հարց 62

Ի՞նչ փաստաթուղթ է հիմք ընդունում պետական կրթական չափորոշչի նախագիծ մշակող աշխատանքային խումբը:

Մասնագիտության նկարագիրը:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 16, պարբ.3, նախաս.3)

Հարց 63

Թվարկվածներից ո՞րն է մասնագիտության նկարագրի առանցքային բաժիններից:

Տվյալ որակավորմամբ մասնագետի դերը մասնագիտական գործունեության բնագավառում իրականացվող աշխատանքների ֆունկցիոնալ շղթայում:

Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 17, կետ 1)

Հարց 64

Թվարկվածներից ո՞րն է մասնագիտության նկարագրի առանցքային բաժիններից:

Խնդիրների բնագավառները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 17, կետ 2, նախադաս.1)

Հարց 65

Ի՞նչ տեղեկություններ են ներկայացվում մասնագիտության նկարագրի «խնդիրների բնագավառները» բաժնում:

Ընդհանրացված տեսքով ներկայացվում են խնդիրների այն բնագավառները, որոնք իր մասնագիտական գործունեության ընթացքում պետք է տվյալ որակավորմամբ մասնագետը առանձին-առանձին լուծի:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 2, նախադաս.2)

Հարց 66

Թվարկվածներից ո՞րն է մասնագիտության նկարագրի առանցքային բաժիններից:

Խնդիրների յուրաքանչյուր բնագավառին վերաբերող աշխատանքային գործընթացը:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 3, նախադաս.1)

Հարց 67

Ի՞նչ տվյալներ են նշվում մասնագիտության նկարագրի «խնդիրների յուրաքանչյուր բնագավառին վերաբերող աշխատանքային գործընթացը» բաժնում:

Տվյալ մասնագետը իր մասնագիտական դերին համապատասխան տվյալ խնդրի հետ կապված ո՞ր գործընթացներն է իրականացնելու:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 17, կետ 3, նախադաս.2)

Հարց 68

Թվարկվածներից ո՞րն է մասնագիտության նկարագրի առանցքային բաժիններից:

Աշխատանքային գործընթացի իրականացման մասին կատարման չափանիշները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 17, կետ 4, նախադաս.1)

Հարց 69

Ի՞նչ տվյալներ են ներկայացվում մասնագիտության նկարագրի «աշխատանքային գործընթացի իրականացման մասին կատարման չափանիշներ» բաժնում:

Այն առանձնահատուկ չափանիշները, որոնց ապահովման դեպքում անվերապահորեն ընդունվում է, որ տվյալ աշխատանքային գործընթացը կատարվել է գործատուների պահանջներին համապատասխան, այսինքն՝ նրա արդյունքներն ընդունելի է:

(*Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 17, կետ 4, նախադաս.2)*

Հարց 70

Թվարկվածներից ո՞րն է մասնագիտության նկարագրի առանցքային բաժիններից:

Տվյալ որակավորման մասնագետի պատասխանատվության շրջանակը:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 5, նախադաս.1)

Հարց 71

Ի՞նչ է նկարագրվում մասնագիտության նկարագրի «տվյալ որակավորման մասնագետի պատասխանատվության շրջանակը» բաժնում:

Մասնագետն իր աշխատանքային գործունեության ընթացքում մասնագիտական ինչ արդյունքների համար է պատասխանատու լինելու:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 17, կետ 5, նախադաս.2)

Հարց 72

Թվարկվածներից ո՞րն է մասնագիտության նկարագրի առանցքային բաժիններից:

Լեզուների իմացությունը:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 6, նախադաս.1)

Հարց 73

Ի՞նչ է տվյալ է նշվում մասնագիտության նկարագրի «լեզուների իմացություն» բաժնում:

Գործատուի պահանջը տվյալ մասնագետի կողմից տարբեր լեզուների տիրապետման մակարդակի նկատմամբ:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 6 , նախադաս.2)

Հարց 74

Թվարկվածներից ո՞րն է մասնագիտության նկարագրի առանցքային բաժիններից:

Համակարգչային ծրագրերի տիրապետման մակարդակը:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 7)

Հարց 75

Թվարկվածներից ո՞րն է մասնագիտության նկարագրի առանցքային բաժիններից:

Գիտելիքներին ներկայացվող պահանջները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 8, նախադաս.1)

Հարց 76

Ի՞նչ տեղեկություն է ներկայացվում մասնագիտության նկարագրի «գիտելիքներին ներկայացվող պահանջները» բաժնում:

Մասնագիտական ինչ գիտելիքների և ինչ մակարդակով պետք է տիրապետի տվյալ որակավորման մասնագետը:

Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 8, նախադաս.2)

Հարց 77

Թվարկվածներից ո՞րն է մասնագիտության նկարագրի առանցքային բաժիններից:

Մասնագետի կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 9, նախադաս.1)

Հարց 78

Ի՞նչ տվյալ է նշվում մասնագիտության նկարագրի «մասնագետի կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները» բաժնում:

Մմասնագետի կարողություններին ու հմտություններին ներկայացվող պահանջները՝ ըստ իր մասնագիտական դերի:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 9, նախադաս.2)

Հարց 79

Թվարկվածներից ո՞րն է մասնագիտության նկարագրի առանցքային բաժիններից:

Մասնագետի անձնային հատկանիշները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 10, նախադաս.1)

Հարց 80

Ի՞նչ է տեղեկություններ են նշվում մասնագիտության նկարագրի «մասնագետի անձնային հատկանիշները» բաժնում:

Այն մարդկային որակները, որոնց պետք է տիրապետի մասնագետը թիմում աշխատելու, այլ անձանց հետ հաղորդակցվելու, աշխատանքային կոլեկտիվում իրեն դրսևորելու և այլ առումներով:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 18, կետ 10, նախադաս.2)

Հարց 81

Ի՞նչ արդյունքներ պետք է ապահովեն մոդուլային ծրագրի առանցքային հմտությունների կազմում ներառված մոդուլները:

Աայնպիսի հմտությունների ձեռքբերում, որոնք ընդհանուր են բոլոր մասնագիտությունների համար:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 23, պարբ.1, նախադաս.2)

Հարց 82

Ի՞նչ պայմաններ են ներկայացվում կրթական ծրագրի պահանջները սահմանելիս:

Մոդուլային ծրագրի կազմակերպման նվազագույն և պարտադիր բավարարման ենթակա պահանջները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 23, պարբ.1, նախադաս.)

Հարց 83

Թվարկածներից ո՞րն է կրթական ծրագրի նվազագույն և պարտադիր պահանջների առաջին խումբը, որն անհրաժեշտ է հաշվի առնել մանկավարժական աշխատողներին աշխատանքի ընդունելու, ինչպես նաև ժամաբաշխում իրականացնելու ժամանակ:

Մանկավարժական անձնակազմի նկատմամբ սահմանվող պահանջները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 23, պարբ. 2, նախադաս.)

Հարց 84

Նշվածներից որո՞նք են կրթական ծրագրի նվազագույն և պարտադիր պահանջների երկրորդ խմբի ապահովման ուսումնամեթոդական ինքնաշխատ նյութերից:

Ուսումնառության նյութեր, գործնական և լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ցուցումները, ստուգողական հանձնարարականները և այլն:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 24, պարբ.1, նախադաս. 3)

Հարց 85

Ներկայացվածներից ո՞րն է կրթական ծրագրի նվազագույն և պարտադիր պահանջների երրորդ խումբը:

Ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների և մարզական համալիրի նկատմամբ պահանջները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 24, պարբ.1, նախադաս. 4)

Հարց 86

Ներկայացվածներից ո՞րն է կրթական ծրագրի նվազագույն և պարտադիր պահանջների չորրորդ խումբը:

Ուսումնական գործընթացի կազմակերպմանը, պրակտիկաների կազմակերպմանը և ատեստավորումներին:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 24, պարբ.1, նախադաս. 6)

Հարց 87

Մոդուլային ուսուցման ծրագրում ի՞նչ են նկարագրում կարողությունների մոդուլները և ինչպես են ներկայացվում:

Որոշակի ձևով միավորված, բնույթով միմյանց շաղկապված գործողություններ և քայլեր, որոնք բխում են մասնագետի մասնագիտական դերից և ներկայացվում են ուսումնառության արդյունքների տեսքով:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 30, պարբ.2, նախադաս. 1, 2)

Հարց 88

Թվարկվածներից ընտրեք կարողությունների մոդուլներում ձևակերպվող ուսումնառության արդյունքների 3 ճիշտ տարբերակ: Օրինակ՝ այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1) ներկայացնի այսինչ իրավիճակը,
2) պատրաստի այսինչ առարկան,
3) կատարի այսսինչ գործողությունը:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 30, պարբ.2, նախադաս. 3)

Հարց 89

Ի՞նչ հիմնական խնդիր է դրված յուրաքանյուր մոդուլի հիմքում:

Նշված կատարման չափանիշներին համապատասխան հասնել ուսումնառության արդյունքներին:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 30, պարբ.2, նախադաս. 3)

Հարց 90

Ո՞ր դեպքում է ուսանողը համարում մոդուլը յուրացրած և դրական գնահատված:

Եթե բավարար մակարդակով ապահովել է բոլոր արդյունքների կա տարման չափանիշները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 36, պարբ.1, նախադաս. 3)

Հարց 91

Ի՞նչ պետք է նկարագրի յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի գնահատման միջոցը:

Այն յուրահատուկ մոտեցումը կամ մոտեցումները, որոնց կիրառմամբ պետք է ստուգվի յուրաքանչյուր ուսանողի կողմից սահմանված կատարման չափանիշներին համապատասխան տվյալ արդյունքի ձեռքբերումը:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 37, պարբ.1, նախադաս. 1)

Հարց 92

Ինչպե՞ս պետք է ձևակերպվի գնահատման միջոցը կամ միջոցները:

Պետք է լինեն հնարավորինս սեղմ, բովանդակալից և ներառեն տվյալ ուսումնառության արդյունքով սահմանված գործնական գործողությունների բոլոր փոփոխական իրավիճակները:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 37, պարբ.1, նախադաս. 2)

Հարց 93

Եթե մեկ գնահատման միջոցով հնարավոր չէ իրագործել ուսումնառության սահմանված պահանջները, ինչպես կարող է հասնել բոլոր պահանջների ապահովմանը:

Նախատեսվում են մեկից ավելի գնահատման միջոցներ:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 37, պարբ.1, նախադաս. 3)

Հարց 94

Նշվածներից ո՞ր գնահատման միջոցը կամ միջոցներն են առավել նպատակահարմար կիրառել:

Այնպիսիք, որոնք ապահովելու են առավել մեծ թվով կատարման չափանիշների իրագործումը:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 39, պարբ.2, նախադաս. 3)

Հարց 95

Ի՞նչ նախապայման է անհրաժեշտ պահպանել մոդուլի ուսումնառության արդյունքի գնահատման միջոցը կամ միջոցներն առաջարկելիս:

Նշել, թե հանձնարարվող առաջադրանքի ինչպիսի կամ ինչ չափի կատարման դեպքում է արդյունքը համարվելու դրական:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 39, պարբ.3, նախադաս. 1)

Հարց 96

Մոդուլային ուսումնական ծրագրերում նույն ուսումնառության արդյունքի ուսուցման ծրագրում ի՞նչ նյութեր կարող են ներառել:

Մասնագիտական տարբեր առարկաներին վերաբերող նյութեր:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 40, պարբ.2, նախադաս. 5)

Հարց 97

Ի՞նչ է նշվում մոդուլի ուսումնառության արդյունքի «ուսուցման մեթոդները և անհրաժեշտ ռեսուրսները» բաժնում.

Այն նպատակահարմար մեթոդները, որոնք երաշխավորվում են ուսուցման համար, և այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են լինելու ուսուցման ընթացքում:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 41, պարբ.2, նախադաս. 4)

Հարց 98

Ինչպե՞ս է սահմանվում մոդուլի ուսումնառության արդյունքի ուսուցման երաշխավորված ժամաքանակը:

Տրվում է արդյունքի ուսուցման համար հատկացվող ընդհանուր ժամաքանակը՝ բաժանելով տեսական ու գործնական պարապմունքների համար նախատեսվող մասերի:

(Սահրադյան Ա, «Կարողություններին միտված ԿՊՀ կազմակերպման ուղեցույց», էջ 42, պարբ.1, նախադաս. 1)

»: